



ՍԴՅԿ Կենտրոնական Վարչութեան Յայտարարութիւնը Հայաստանի Վերջին Իրադարձութիւններուն Կապակցութեամբ

Հայաստանի Հանրապետութիւնուն տեղի ունեցող վերջին իրադարձութիւնները եկան մէկ անգամ եւս փաստելու, որ նախկին իշխանութիւններն ու նրանց շուրջ համախմբուած ուժերը փորձում են տապալել Թաւշեայ Յեղափոխութեան շնորհիւ իրականացուող բարեփոխումների գործընթացը:



2008 թուականի Մարտի 1-ի իրադարձութիւնների առնչութեամբ՝ սահմանադրական կարգի տապալման մի շարք այլ յանցանքներում մեղադրուող նախկին նախագահին աջակցող ուժերը ջանք չեն խնայում նոր սկսուած դատավարութեան տալ քաղաքական երանգ՝ այդ գործընթացում անհարկի ներքաշելով նաեւ Արցախի իշխանութիւններին:

Թաւշեայ յեղափոխութիւնից յետոյ բոլորին ընձեռուած ազատութիւնները շահագործելով, Քոչարեանն ու իր շրջապատը՝ ժողովրդից կողոպտուած հսկայական նիւթերն ու իրենց կողմից ֆինանսաւորող լրատուամիջոցները գործի դնելով ամեն կերպ ջանում են նրան ներկայացնել որպէս քաղաքական հալածեալ, այն պարագայում, երբ իր իշխանութեան տարիներին նա հետեւողականօրէն սահմանափակեց ազատ մամուլը եւ քաղաքական հալածանքի ենթարկեց իր ընդդիմախօսներին:

Թաւշեայ Յեղափոխութեամբ եւ դրան յաջորդող խորհրդարանական ընտրութիւններով, Հայաստանի քաղաքացին ազդարարեց համայն աշխարհին, որ նա կրկին տերն է իր երկրի եւ իշխանութեան: Դժբախտաբար, առ այսօր դատական տարբեր ատեանների կողմից առնուած մի շարք տարակուսելի որոշումներն ու վճիռները վկայում են այն մասին, որ ի տարբերութիւն երկրի գործադիր ու օրէնսդիր իշխանութիւնների, Հայաստանի դատական համակարգը իր ներկայ կազմով եւ գործելաոճով ի վիճակի չի քայլ պահելու նոր Հայաստանի տեսլականի հետ եւ իրականացնելու ժողովրդի յոյսերն ու ակնկալիքները:

Անյայտ է, որ քանի դեռ համակարգը չի մաքրուել նախորդ իշխանութիւնների հետ բազմաթիւ տեսանելի ու անտեսանելի թելերով կապուած ու կասկածելի գործարքների մէջ մտած դատաւորներից եւ գործադրութեան չէ դրուել անցումային արդարադատութիւնը, անկարելի պիտի լինի իրականացնել արմատական բարեփոխումներ այդ համակարգում եւ վերականգնել հասարակութեան վստահութիւնը դատական իշխանութեան նկատմամբ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը իր աշխարհացրիւ կառույցների անունով մէկ անգամ եւս յայտնում է իր ամբողջական զօրակցութիւնը համաժողովրդական յեղափոխութեան դաւանած սկզբունքներին եւ պատրաստ է իր աջակցութիւնը բերել իրականացնող հաստատման գործում, կառուցելու համար մեր բոլորի երազած ինքնիշխան, ժողովրդավար, արդար ու բարգաւաճ Հայաստանը:

ՍԴՅԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Դիտորդներու Համաձայն՝ Հայաստանի Վարչապետի Կոչը Ստահոգիչ է, Բայց Դատական Բարեփոխումները Անհրաժեշտ են

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵՆԽՎ) Հայաստանի հարցով համագեկուցողները մտահոգութիւն յայտնած են դատարաններու մուտքերն ու ելքերը փակելու՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողմից կապակցութեամբ, միաժամանակ՝ շեշտած երկրի մէջ դատական իշխանութեան նկատմամբ հանրային վստահութեան ցած մակարդակն ու դատական բարեփոխումներու անհրաժեշտութիւնը:

«Քաղաքական շահագրգիռ կողմերը պէտք է գերծ մնան գործողութիւններէ եւ յայտարարու-

թիւններէ, որոնք կրնան ընկալուիլ որպէս ճնշում դատական իշխանութեան նկատմամբ», - ըստած է ԵՆԽՎ Լովոչքինայի եւ Անտրէյ Շիրցելի յայտարարութեան մէջ, որ հրապարակուած է ԵՆԽՎ-ի պաշտօնական կայքէջին վրայ: Համագեկուցողները նշած են, որ Փաշինեանի կողմ յաջորդած է Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանին կալանքէն ազատ արձակելու դատաւորի որոշման:

«Դատական իշխանութեան

Փաշինեան. «Եկած է Դատական Համակարգին Սեշ Վիրահատական Միջամտութիւններ Կատարելու Ժամանակը»



ԳՅ վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Կառավարութեան դահլիճէն ներս տեղի ունեցած յատուկ նիստի մը ընթացքին

Կառավարութեան դահլիճէն ներս տեղի ունեցած յատուկ նիստի մը ընթացքին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան հանդէս եկաւ ելոյթով մը, որուն ընթացքին անդրադարձաւ վերջին օրերու զարգացումներուն, ինչպէս նաեւ ներկայացուց Հայաստանի դատական համակարգի վերաբերեալ իր ունեցած գնահատականը:

«Դատական համակարգի՝ ժողովրդական վստահութեան արժանանալու ընթացիկ հնարաւորութիւնը համարում եմ այլեւս սպառնաւոր», - յայտարարեց վարչապետ

Նիկոլ Փաշինեանը, աւելցնելով, «Եւրոպայի Խորհուրդի գործընկերներ, եկել է դատական համակարգում վիրահատական միջամտութիւններ իրականացնելու ժամանակը»:

Այդ գործընթացը, ըստ Հայաստանի կառավարութեան դեկավարին, պէտք է արտայայտուի հետեւեալ քայլերով:

«Առաջինը՝ ՀՀ-ում գործող բոլոր դատաւորների մասին հանրութիւնը պէտք է ամբողջական տեղեկատուութիւն ունենայ դատա-

Հայաստանի ԱԳՆ-ն Կը Դատապարտէ Ատրպէյճանի Ցեղապաշտական Կեցուածքը

Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբի եւ Լոնտոնի «Արսենալ»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը անդրադարձած է Պաքուի մէջ կայանալիք Եւրոպայի լիգայի եզրափակիչին եզրափակիչին չմասնակցելուն:

«Քննարկելով բոլոր տարբերակները՝ բարդ որոշում կայացուցինք, որ պէտք է խումբին հետ մեկնիմ Եւրոպայի լիգայի եզրափակիչին: Այսպիսի բան ֆուտպոլիստներու հետ յաճախակի չեն պատահիր, եւ ինձի համար մեծ ցաւ է խաղին չմասնակցիլը: Ես պիտի քաջալերեմ իմ խումբը: Եկէք տուն բերենք բաժակը», - Ֆէյսպուքի իր էջին գրած է Մխիթարեանը:

«Արսենալ»-ը արդէն պաշտօնապէս հաստատած է, որ Մխիթարեանը խումբին հետ պիտի չմեկնի Պաքու:

Եւրոպայի լիգայի եզրափակիչը պիտի կայանայ 29 Մայիսին Պաքուի մէջ, ուր «Արսենալ»-ը պիտի մրցի «Չելսի»-ի հետ:

Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւնը Ատրպէյճանի կողմէ Հեն-



«Արսենալ»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեան

րիխ Մխիթարեանին Պաքուի մէջ կայանալիք Եւրոպայի լիգայի եզրափակիչին մասնակցելու համար անվտանգութեան բաւարար երաշխիքներ չտալն ու ենթադրեալ հայկական ծագում ունեցող երկրպագուներու մուտքը Ատրպէյճան արգիլելը ցեղապաշտութեան նոր դրսեւորում կը համարէ:

ԼՈՒՐԵՐ

Լարուածութիւնը Ղարաբաղի Սեչ Կրնայ Իսլամիստներուն Բերել Սեր Տարածաշրջան». Փաշինեան

Լարուածութիւնը Ղարաբաղի մէջ կրնայ իրաքէն եւ Սուրիայէն աչտաչ փախչող իսլամիստներուն բերել մեր տարածաշրջան, ուստասանցի լրագրողներու հետ հանդիպման ժամանակ յայտարարած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Դուք տեսնուած էք՝ ինչ լարուած իրավիճակ է իրանի շուրջ, եւ այդ լարուածութիւնը շարունակուած է աճել: Սիրիայում մեծ քանակի իսլամական ծայրայեղական խմբաւորումների գրոհայիններ կան, նրանք հասկանում են, որ այլեւս տեղ չունեն Սիրիայում եւ իրաքում: Մեր տեղեկութեամբ, նրանք աչտաչ նոր տեղ են փնտռում, որտեղ կարող են յայտնուել: Եթէ մեր տարածաշրջանում սկսուի նոր թեժացումներ, դա նրանց համար լաւ առիթ կը լինի, որպէսզի նրանք յայտնուեն, օրինակ, Ատրպէյճանում: Շատ յարմար կէտ է նրանց համար, որտեղից նրանք կարող են իրենց գործունէութիւնը ծաւալել իրանի, Ռուսաստանի, Հարավային Կովկասի եւ Կեդրոնական Ասիայի ուղղութեամբ», - ըսած է Փաշինեանը ռուսական լրատուա-

միջոցներու ներկայացուցիչներուն՝ յաւելելով, թէ նոր պատերազմը Ղարաբաղի մէջ արդէն տեղական չըլլար՝ յոյս յայտնելով, թէ այդ կը հասկնան ե՛ւ Ռուսաստանի, եւ Ատրպէյճանի՝, ե՛ւ իրանի մէջ:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը մտադիր է յառաջիկայ շաբաթներուն՝ Մայիսի վերջը եւ Յունիսի սկիզբը, հանդիպել Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի հետ Ղազախստանի մայրաքաղաք Նուր-Սուլթանի մէջ, ուր տեղի պիտի ունենայ Եւրասիական տնտեսական համաժողովը, ինչպէս նաեւ Ս. Փետրոսպոլսի մէջ նախատեսուած տնտեսական համաժողովի ժամանակ:

Ռուսական լրատուամիջոցներու համաձայն, Հայաստանի վարչապետը նշած է նաեւ, որ Ռուսաստանի եւ Հայաստանի դեկավարներուն միջեւ կապը պահելու համար հանդիպելը պարտադիր պայման է:

«Ես միշտ կարող եմ, երբ պէտք լինի, գանգել Վլատիմիր Վլատիմիրովիչին, ան կրնայ գանգել ինձ, որեւէ խնդիր չկայ», - ըսած է Փաշինեանը:

«Վիզաներու Ազատականացումը Սեզի Համար Սկզբունքային Հարց է». Զ. Մնացականեան

«Վիզաների ազատականացումը մեզ համար շատ կարեւոր, շատ սկզբունքային հարց է: Նորից լսեցիք՝ քննարկման ժամանակ մենք նորից անդրադարձանք, որովհետեւ այն, ինչ մենք անում ենք մեր երկրի համար, այն, ինչ մենք անուանում ենք արժէքներ եւ կառուցում ենք մեր երկիրը, եւ Թաւաշեայ յեղափոխութեան պատգամը, որը վերաբերում է արժէքներին, ժողովրդավարութեան, մարդու իրաւունքների պաշտպանութեանը, օրէնքի գերակայութեանը, ընկերային-տնտեսական կեանքում հասարակականներին, դա մեր ընտրութիւնն է: Դա աշխարհաքաղաքականութիւնից դուրս ընտրութիւն է, եւ մեր ազգային շահից բխող, ժողովրդի կողմից ընտրուած մօտեւ է», - այս մասին Պրիւքսէլի մէջ Արեւելեան գործընկերութեան համաժողովի շրջածիրէն ներս լրագրողներուն ըսած է Հայաստանի արտաքին

գործոց նախարար Զօհրապ Մնացականեանը:

Արտաքին գործոց նախարարը նշած է, որ ամէն ինչ կը վերաբերի մարդուն, քաղաքացիին, աւելցնելով, որ «սա վերաբերում է մեզ, մեր երկրին եւ մեր գործընկերների հետ՝ ներառեալ Եւրոմիութեան շրջանակներում մեր համագործակցութեանը: Ազգային շփումները սկզբունքային, կարեւորագոյն հարց են, վիզաների ազատականացումը ոչ միակ, բայց այն կարեւորագոյն գործիքն է, որը հնարաւորութիւն է տալիս մեզ ամրապնդելու այն, ինչ կոչուած է մարդկային շփում: Սա չափազանց կարեւոր հարց է մեզ համար»:

Վիզաներու ազատականացման որեւէ յստակ ժամկէտ նախարարը չէ նշած, ըսելով, որ սա իւրաքանչիւր պահի հարց է, օրակարգի կարեւոր կէտերէն է, շարունակական է:

Ուաշինկթըն Դադեցուցած է Առեւտուրի Յատուկ Արտօճեալ Ռեժիմը Անգարայի Հետ

ԱՄՆ-ի նախագահ Տանըլտ Թրամբը 17 Մայիսէն չեղեալ յայտարարած է Թուրքիոյ հետ առեւտուրի արտօճեալ ռեժիմը՝ յայտարարելով, թէ հանած է Թուրքիոյ արտօնութիւններու ծրագրի շահառուներու ցուցակէն:

Այսպիսով Միացեալ Նահանգները Թուրքիան այլեւս չի դիտարկել որպէս զարգացող երկիր:

«Ռոյթըրը»-ի փոխանցմամբ, Ուաշինկթընի այս յայտարարութեանէն ետք, Թրքական լիւրան սկսած է արժեզրկուել:

Թուրք-ամերիկեան յարաբերութիւնները կտրուկ սրուած են Անգարայի կողմէ ռուսական C-400

գէնիթա-հրթիռային համալիրներու ձեռքբերման գործարքի պատճառով:

Ամերիկեան կողմը կտրականապէս դէմ է Անգարայի կողմէ ռուսական արտադրութեան հակահրթիռային պաշտպանութեան համակարգերու ձեռքբերման՝ պնդելով, որ անոնք անհամատեղելի են ՆԱՌՕ-ի Հակաօդային պաշտպանութեան միասնական համակարգի հետ:

Թրքական կողմը, սակայն, կը շարունակէ հակադարձել, որ C-400 համակարգերը պիտի գործեն անկախ եւ բնաւ պիտի չօգտագործուին ՆԱՌՕ-ի անդամ պետութիւններէն որեւէ մէկուն դէմ:

Դաւիթ Տօնոյեան. Այսօրուան Հայաստանի Սեչ Հնարաւոր Չեն Դաւաճանական Գործողութիւններ

Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը կը բացատրէ, թէ որոշ ուժերու կամ գործիչներու կողմէ Հայաստանի նկատմամբ հնարաւոր են դաւաճանական գործողութիւններ, ինչի մասին կառավարութեանէն ներս հրաւիրած խորհրդակցութեան ժամանակ յայտարարած էր վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Վանաձորի մէջ «Ազատութեան» հարցին ի պատասխան նախարարը ըսած է. - «Որպէս Պաշտպանութեան նախարար, ես թույլ չեմ տայ, որ էդպիսի բան լինի: Այսօրուայ Հայաստանում հնարաւոր չէ դաւաճանական գործողութիւններ: Եւ բոլոր գործողութիւնները կը չէզոքացուեն հենց սկզբնաղբիւրում»:

Նիկոլ Փաշինեանը ըսած էր, որ «կան այնպիսի ուժեր եւ գործիչներ, ովքեր նախապատրաստում են դաւաճանական գործողութիւններ»: Երկրի դեկավարը ըսած էր, որ վերլուծելով իրավիճակը, անոր տակ կը տեսնէ «ընդհուպ դաւաճող պատերազմ հրահրելու, անգամ որոշ տարածքներ յանձնելու եւ տեղի ունեցածի պատասխանատուութիւնը Հայաստանի կառավարութեան վրայ դնելու հեռահար նպատակ»:

Ռազմական գործողութիւններու վերսկսման հնարաւորութեան մասին հարցին նախարարը արձագանգած է. - «Ռազմական գործողութիւնները հնարաւոր է, որ իրականացուեն տարբեր պատճառներով: Հնարաւոր է»:

Նշենք, որ Պաշտպանութեան նախարարը Վանաձորի մէջ կը



Հայաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան

մասնակցէր բնակարանամուտի արարողութեան: Շահագործման յանձնուած է նախարարութեան միջոցներով վերակառուցուած քառաբարկ բնակելի շէնքը, որ կիսաքանդ վիճակի մէջ էր խորհրդային տարիներէն ի վեր: Վանաձորի գործառններէն մէկու 48 սպաները կ'ապրին բարեկարգ պայմաններու մէջ: Շէնքի վերակառուցման վրայ նախարարութիւնը ծախսած է 320 միլիոն դրամ:

Դաւիթ Տօնոյեանը ըսած է, որ ծրագրերը շարունակական պիտի ըլլայ: Ան նշած է, որ Երեւանի մէջ հաշմանդամութիւն ունեցող գինծառայողներ եւ զոհուած ու մահացած զինուորներու 55 ընտանիքներ անհատուց, սեփականութեան իրաւունքով նորակառուց շէնքի մէջ բնակարաններ պիտի ստանան յառաջիկայ օրերուն:

Կարօ Փայլան Հանդիպած է «Կրօնափոխ Եղած» 13-ամեայ Արթուրին

Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլանը հանդիպած է պոլսահայ 13-ամեայ հայ տղայ՝ Արթուրի հետ, որ դարձած էր թուրք հաղորդավար, աստուածաբան Նիհայի Հաթիփօղլուի հաղորդման «գոհը»: Այս մասին կը գրէ «Էրմէնի հապերը»:

Հաթիփօղլուն հայ տղուն համոզած էր ուղիղ եթերի ընթացքին իսլամ ընդունիլ: Տղան նաեւ անուանափոխ եղած էր եւ ընդունած թրքական «Նիհայի» անունը: «Իսլամի ընդունումը» տեղի ունեցած էր թուրք յայտնի աստուածաբան Նիհայի Հաթիփօղլուի՝ քարոզչական բնոյթի հաղորդման ժամանակ:

Փայլանը հայ տղուն հետ հանդիպումէն լուսանկար հրատարակած է իր ֆէյսպուքեան էջին, որուն կից կատարած է գրառում: «Հանդիպեցայ Արթուրին: Ան լաւ է: Միշտ իր քով պիտի ըլլամ»:



Կարօ Փայլան եւ պոլսահայ 13-ամեայ հայ տղայ՝ Արթուր

Ձինք հնարաւորինս պիտի պաշտպանեմ շարութեանց դէմ», - գրած է Փայլանը:

Կը նշուի, որ Արթուրի մայրը նախապէս պարզաբանած էր, որ Արթուրը կնքուած է եւ կը յաճախէ հայկական եկեղեցի:

Եւրոպայի Դիտորդներու Համաձայն

Շարունակուած է 1-էն

անկախութիւնը օրէնքի գերիշխանութեան նախապայման է, եւ օրէնքի գերիշխանութիւնը լաւագոյնս կ'ապահովուի քաղաքական դերակատարներու որեւէ միջամտութեան բացակայութեամբ», - շեշտած են համազգեկուցողները:

«Դատական բարեփոխումները առաջնահերթութիւն կը մնան,

եւ մենք կ'ողջունենք դատական համակարգի հեռահար բարեփոխման՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի արտայայտած յանձնառութիւնը, յատկապէս՝ փտածութեան դէմ պայքարի հետ կապուած, ինչպէս նաեւ այդ հարցի վերաբերեալ Եւրոպայի խորհուրդի հետ համագործակցելու անոր ցանկութիւնը», - ըսուած է Լովոչքինայի եւ Շիրցելի յայտարարութեան մէջ:

Փեքինի Ողիմպիական Մարզադաշտը Ցնծուրեանք Ընդունեց Հայկական Քոչարին



Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ տիկին Աննա Յակոբեան փեքինի Ազգային ողիմպիական մարզադաշտին մէջ ներկայ գտնուած են «Ասիական քաղաքակրթութիւններու երկխօսութիւն» համաժողովի կալա համերգին: Ձեռնարկին ներկայ եղած են նաեւ Չինաստանի ժողովրդական Հանրապետութեան նախագահ Սի Մինփինը, Սինկափուրի, Սրի Լանքայի, Յունաստանի նախագահները եւ Գամպուիայի թագաւորը: Բացման խօսքով հանդէս եկած է ՉժՀ նախագահ Սի Մինփինը եւ ջերմօրէն ողջունած ներկաներուն:

Կալա համերգի ընթացքին «Ասիական քաղաքակրթութիւններու երկխօսութիւն» համաժողովի մասնակից քանի մը տասնեակ պետութիւններու ներկայացուցիչները հանդէս եկած են կատարումներով՝ ներկայացնելով իրենց ազ-

գային մշակոյթը: Ձեռնարկին ընթացքին ելոյթ ունեցած է նաեւ Հայաստանի պարարուեստի «Բարեկամութիւն» պետական համոյթը Հայկական Քոչարի պարով: «Երեկոյեան արդէն մեր Քոչարին հեռարձակուեց չինական ամենախոշոր հեռուստաընկերութիւններից մէկի՝ CCTV-ի եթերում», - ֆէյսպուքեան իր էջին տեղադրուած տեսանիւթը մակագրած է Աննա Յակոբեանը:

«Ասիական քաղաքակրթութիւններու երկխօսութիւն» համաժողովի մասնակիցներու թիւը կ'անցնի 2 հազարը՝ աշխարհի 47 երկիրներէ: Համաժողովին նպատակն է ամրապնդել Ասիական տարածաշրջանի պետութիւններու կապերը, ներառեալ՝ տնտեսական, խորացնել համագործակցութիւնը տարբեր ուղղութիւններով:

Հայաստանի ԱԳՆ-ն Կը Դատապարտէ

Շարունակուած էջ 1-էն

«Արմէնփրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին 21 Մայիսին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքին ըսած է ՀՀ Արտաքին գործոց նախարարութեան մամուլի խօսնակ Աննա Նաղդալեանը:

«Եթէ ատրպէյճանական կողմից համապատասխան անվտանգութեան երաշխիքներ տրուէին, որոնք կը բաւարարէին եւ Հենրիխ Միխիթարեանին, եւ իր թիմին, ապա արտաքին գործերի նախարարութիւնը որեւէ առարկութիւն չունի Հենրիխ Միխիթարեանի մասնակցութեանը Պաքու կայանալիք խաղին», - ըսած է Նաղդալեանը:

Ինչ կը վերաբերի Ատրպէյճանի կողմէ կատարուող հայկական ծագում ունեցող երկրպագուներու մուտքը իրենց երկիր արգիլելուն, Աննա Նաղդալեանը նշած է, որ այդ հարցը Հայաստանի կողմէ պիտի բարձրացուի միջազգային գործընկերներու առջեւ:

«Մենք կ'ողջունէինք, եթէ ատրպէյճանական կողմը հաւատա-

րիմ լինէր այն սկզբունքին, որ սփորթը վեր է քաղաքականութիւնից: Առաւել եւս, սփորթում ցեղապաշտութեան եւ ալլատեացութեան դրսեւորումները որեւէ տեղ չպէտք է ունենան: Այս առումով Ատրպէյճանի կողմից նման երաշխիքների չտրամադրումն ու ենթադրեալ հայկական ծագում ունեցող երկրպագուների մուտքի արգիլքը ոչ այլ ինչ է, քան ցեղապաշտական նոր դրսեւորում, եւ դա կասկածի տակ է դնում Ատրպէյճանում նման կարգի միջազգային միջոցառումների անցկացումը: Այս խաղով Ատրպէյճանը հնարաւորութիւն ունէր ցոյց տալու, թէ որքան է իրապէս պատրաստ ժողովուրդներին խաղաղութեան նախապատրաստելուն, սակայն մենք ոչ միայն չտեսանք որեւէ ներդրում այս ուղղութեամբ, այլ նաեւ ականատես եղանք ցեղապաշտական նոր դրսեւորումների: Բնականաբար մեր կողմից այս հանգամանքը բարձրաձայնուելու է մեր միջազգային գործընկերների առջեւ», - նշած է խօսնակը:

Եկած է Վիրահատօին Կատարելու Ժամանակը

Շարունակուած էջ 1-էն

Լորի ունեցած քաղաքական կապերի, ծագումնաբանութեան, գոյքային վիճակի, դատաւորի կարգավիճակում ու նախորդ ժամանակաշրջանում ծաւալած գործունէութեան, անհատական եւ մասնագիտական յատկանիշների մասին, -երկրորդ՝ Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի որոշումներով հաստատուած քաղաքական, իրաւական կոպիտ խախտումներով դատավճիռների հեղինակ բոլոր դատաւորները պէտք է հրաժարական տան, հեռանան կամ հեռացուեն,

-երրորդ՝ բոլոր այն դատաւորները, որ իրենց ներսում գիտեն, որ չեն կարող լինել անաչառ ու առարկայական դատաւորներ, պէտք է հրաժարական տան՝ ծառայութիւն մատուցելով ՀՀ եւ ՀՀ ժողովրդին,

-չորրորդ՝ անցումային արդարադատութեան մեխանիզմների ներդրումը կենսական անհրաժեշտութիւն է ՀՀ համար, մենք պէտք է մէկ-երկու ամսուայ ընթացքում ամփոփենք այս ուղղութեամբ կատարուած աշխատանքները,

-հինգերորդ՝ Աժ-ում պէտք է տեղի ունենայ օրէնսդրական աշխատանք՝ կենսական այս կարգը կենսաքի կոչելու եւ ՀՀ-ում իրապէս երաշխաւորուած անկախ դատական համակարգ ունենալու համար: Եթէ անհրաժեշտ լինի իրականացնել սահմանադրական փոփոխութիւններ, պէտք է գնանք այդ քայլին, եթէ պէտք լինի դա անել ժողովրդի հանրաքուէով, պէտք է գնալ նման լուծումի, այս աշխատանքը պէտք է տեղի ունենայ միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնների հետ համագործակցութեամբ, միջազգային փորձի եւ ՀՀ ստանձնած միջազգային պարտաւորութիւնների շրջանակներում», - վստահեցուցած է Նիկոլ Փաշինեանը:

«Այս ողջ օրակարգը արդէն երկար ժամանակ մենք քննարկում ենք ՄԱԿ-ի, ԵՆ-ի, ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի, Արժոյթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային պանքի ներկայացուցիչների հետ, եւ ես յոյս ունեմ՝ մեր բոլոր միջազգային գործընկերները կը կանգնեն Հայաստանի կողքին, որովհետեւ մեր ուզածը ոչ թէ մի նոր խամաճիկային դատական համակարգ ունենալն է, այլ իրապէս անկախ, առարկայական, իրապէս իրաւունքի գերակայութեան վրայ հիմնուած դատական համակարգ, որը համապատասխանում է քաղաքակիրթ աշխարհի առաջատար չափանիշներին», - ըսած է Փաշինեանը՝ նշելով, որ պէտք է համագործակցիլ նաեւ հայաստանեան քաղաքացիական հասարակութեան, հասարակական կազմակերպութիւններու եւ փորձագիտական հանրութեան հետ:

ներ յանձնել եւ տեղի ունեցածի պատասխանատուութիւնը դնել Հայաստանի կառավարութեան վրայ», - հանդիպման ժամանակ յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Հայաստանի ղեկավարը ընդգծած է, որ այդ կը համարուի պետական դաւաճանութեան նմանող գործունէութիւն եւ պիտի ձեռնարկէ ամենակոշտ միջոցները այդ դաւաճիչ մտադրութիւնները արմատախիլ ընելու համար:

«Ակնյայտ է, որ կան նախկին փտած համակարգը ներկայացնող ուժեր, որոնք փորձ են անում կենսաքի կոչել իրենց կողմից նախկինում կիրառուած բանաձեւը: այն է՝ տարածաշրջաններ, հակասութիւններ եւ նոյնիսկ թշնամանք հրահրել Արցախի եւ Հայաստանի ժողովրդի միջեւ՝ «Բաժանիք, որ տիրես» տրամաբանութեամբ՝ նախկինում իրենց կողմից թոյլ տրուած յանցագործութիւնները կոծկելու, արդարացնելու նպատակով»:

«Չնայած բոլորիս ակնյայտ է, որ մեր երկրում գործած համակարգային փտածութիւնից Արցախի մեր հայրենակիցները յաճախ աւելի շատ են տուժել, բայց այդ համակարգերի որոշ պաշտօնեաներ գործադրում են կոռուպցիոն կապերը՝ Արցախում Հայաստանի կառավարութեան եւ անձամբ վարչապետի դէմ ստալոյ քարոզչութիւն իրականացնելու համար», - շարունակած է վարչապետը: «Դեռեւս նախորդ տարուայ խորհրդարանական ընտրութիւնների քարոզարշաւին ասել եմ, որ այս ամէնը վերլուծելով՝ դրա տակ տեսնում եմ ընդհուպ դաւաճիչ պատերազմ հրահրելու, անգամ որոշ տարածքներ յանձնելու եւ տեղի ունեցածի պատասխանատուութիւնը Հայաստանի կառավարութեան վրայ դնելու հեռահար նպատակ: Այս իմաստով՝ դա համարում եմ պետական դաւաճանութեանը նմանող գործունէութիւն, եւ որպէս Արցախի անվտանգութեան երաշխաւորը հանդիսացող Հայաստանի Հանրապետութեան վարչապետ՝ պատերազմական իրավիճակներում Ձինուած ուժերի գերագոյն հրամանատար, ձեռնարկելու եմ ամենակոշտ միջոցները այս դաւաճիչ մտադրութիւնները արմատախիլ անելու համար»:

Փաշինեանը յայտարարած է ապրիլեան պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող խորհրդարանական քննիչ յանձնաժողով ստեղծելու անհրաժեշտութեան մասին: «Իմիջիայլոց, կարծում եմ, հասունացել է ժամանակը՝ 2016 թուականի ապրիլեան պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ յանձնաժողով ստեղծելու եւ մեզ բոլորիս յուզող մի շարք հարցերի պատասխանները ստանալու համար: Ամփոփելով Արցախ-Հայաստան թեման՝ կոչ եմ անում Արցախի մեր ժողովրդին միանշանակ եւ աներկբայ ոչ ասել, մերժել բոլոր այն ուժերին, ում գործունէութիւնն ուղղուած է մեր ժողովրդի երկու հատուածների միջեւ հակասութիւններ սերմանելուն: Արցախի ժողովրդին կոչ եմ անում աջակցել միայն այն ուժերին, ովքեր հանդէս են գալիս Հայաստանի ժողովրդի եւ նրա օրինական ներկայացուցիչ կառավարութեան աներկբայ աջակցութեան դիրքերից»:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
 ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՓԻ ՎԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Նախկին Փտած
 Համակարգը
 Ներկայացնող Ուժերը կը
 Փորձեն Հրահրել
 Թշնամանք

«Նախկին փտած համակարգը ներկայացնող ուժերը փորձում են թշնամանք հրահրել Արցախի եւ Հայաստանի ժողովրդի միջեւ, նպատակ ունեն սանձագերծել դաւաճիչ պատերազմ, անգամ որոշ տարածք-

Հարցազրույց Այս Դատական Իշխանութիւնը Պետք է Ամբողջութեամբ Եւ Լիովին Կազմալուծուեր

«Լրագիրի» զրուցակիցն է «Մարտի 1-ի» գործով նախկին մի շարք դատապարտեալների պաշտպան, փաստաբան Մուշեղ Շուշանեանը

ՍԻՐԱՆՈՒՅՇ ՊՊՊԵԱՆ, Հարցազրուցավար

Պարոն Շուշանեան, խորհրդարանում այս ամիս սկսուում են անցումային արդարադատութեան շուրջ քննարկումները: Շատերը նշում են, որ պետք էր յեղափոխութեան ընձեռած հնարաւորութիւնը բաց չթողնել եւ հենց սկզբում դա իրականացնել: Դուք ի՞նչ կարծիք ունեք անցումային արդարադատութեան վերաբերելու եւ արդեօք հիմա այն ուշացած չէ:

Ոչ միայն դրանք ուշացած են, այլ անցումային արդարադատութեան մասին բոլոր խօսակցութիւններն ու խոստումները իմիտացիոն բնույթ են կրում: Անցումային արդարադատութիւն մեզ մօտ չի լինելու, եւ դրանում համոզուած եմ: Ժամանակին իմ յայտնած կասկածները, թէ նախորդ տարի տեղի ունեցածը յեղափոխութիւն չէր, հիմա միարժէքորէն վերահաստատում եմ: Յեղափոխութիւնը համակարգի արմատական փոփոխութիւն է: Անցած մէկ տարում այդ համակարգը հնարաւոր էր եւ պէտք էր փոխել, բայց մենք տեսնում ենք, որ համակարգի փոփոխութիւն տեղի չի ունեցել: Նման հարցերում ես պատահականութեան գործօնը բացառում եմ: Այսինքն՝ անցումային արդարադատութեան մասին ուշացումով՝ 2018-ի Օգոստոսին, խոսեց վարչապետը հանրահասարակ ժամանակ, բայց գործնական որեւէ քայլ չհետեւեց այդ յայտարարութեանը: Դրանք իմիտացիոն խօսակցութիւններ են, որոնք ժողովրդի մի մասին յոյս տալու եւ ժամանակի ընթացքում այդ թեման սպառելու նպատակ են հետապնդում: Այսինքն՝ չի լինելու նման բան:

Իշխանութեան ներկայացուցիչները պնդում են, որ լինելու է, այ կը լինի, կը տեսնեք:

Երբ ասում եք իշխանութեան ներկայացուցիչներ, ինձ համար լիովին պարզ է, թէ ում նկատի ունեք: Այստեղ խնդիրն այն է, որ ձեր նշած իշխանութեան ներկայացուցիչներն այնպիսի թերահաւատութիւն են առաջացրել ժողովրդի գիտակից մասի մօտ, որ իրենց որեւէ ասածի ալիւս այդ գիտակից հատուածից որեւէ մէկը լուրջ չի վերաբերւում: Կարծում եմ՝ ասածս բաւարար է, չեմ ուզում աւելի կոպիտ որակումներ տալ:

Անցումային արդարադատութիւնը, Ձեր կարծիքով, ո՞ր ժամանակահատուածը պետք է ընդգրկի: Տեսակետ կայ, որ շատ դժուար կը լինի անկախութեան հռչակման օրերից մինչեւ մեր օրերը դիտարկել դա: Կայ նաեւ տեսակետ, որ դա անհնար է եւ միայն վերջին 10-ամեակը պետք է դիտարկել:

Ես անհնար ոչինչ չեմ տեսնում: Եթէ ասենք, 1996 կամ 1998 թուականներին ընտրութիւնները կեղծուել են, ապա անցումային արդարադատութեան մարմնի կողմից կարող է այդ հարցը քննուել, բայց ես վստահ եմ, որ նման բան չի ստեղծուի: Իսկ եթէ, այնուամենայնիւ, ստեղծուի, այն լիովին հակառակ գործարք է իրականացնելու, այսինքն աւելի լաւ է, որ չստեղծուի: Այստեղ ես մի քանի խմբի գործ կարող եմ առանձնացնել, որոնք պէտք է քննութեան առնուեն: Դա Մարտի 1-ի՝ ժողովր-

դին պատկանող պետական իշխանութիւնը իւրացնելու, սահմանադրական կարգը տապալելու գործն է: Դա գործերի մի խումբն է, այսինքն ոչ միայն իշխանութիւնը իւրացրածներին պատասխանատուութեան ենթարկելու, այլեւ անմեղ դատապարտուածների իրաւունքները վերականգնելու համատեքստում պէտք է հարցը քննուի: Դա էլի Ռոբերտ Քոչարեանի իշխանավարման տարիներին տեղի ունեցած սեփականութեան իրաւունքից զրկուած անձանց իրաւունքների վերականգնման գործն է, մասնաւորապէս Հիւսիսային պողոտայում տների սեփականատէրերի վերաբերեալ: Ես էլի կարող եմ մասնաւոր գործեր մեջբերել, բայց ուզում եմ առանձնացնել «Մասնայ ծռերի» գործը: Ամէն դէպքում, այդ գործը պէտք է դիտարկել ժողովրդից իւրացուած իշխանութիւնը վերադարձնելու, սահմանադրական կարգը վերականգնելու



Համատեքստում:

Վրաստանում անցումային արդարադատութիւնն այնտեղ, կարծեք թէ գործեց: Ինչո՞ւ էք կարծում, որ մեզ մոտ չի գործելու:

Մեր եւ Վրաստանի փորձերի համեմատութիւնը տեղին չեմ համարում, որովհետեւ այնտեղ իրօք տեղի ունեցած պրոցեսները կարելի է դնահատել որպէս յեղափոխութիւն: Այնտեղ տեղի ունեցածը

Համակարգի փոփոխութիւն էր: Իսկ Հայաստանում տեղի ունեցածը հիմք չի տալիս այնպիսի, որ սա յեղափոխութիւն էր: Ուզում եմ բոլորի ուշադրութիւնը հրաւիրել նրա վրայ, որ Մարտի 1-ի կազմակերպիչների գործը վստահել է այս դատական համակարգին: Ինձ համար ցանկացած անակնկալ սպասե-

Շար.ը էջ 17

COMEDY NIGHT

Կազմակերպութեամբ՝
 «Մ.Մ.»-ի Տիկնանց Վարչութեան
 և նպաստ՝
 ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

ԾԻԾԱՂԻ ԵՐԵԿՈՅ

Երեկոն կը խաղաղաւառէ՝
ՅԱՐՈՒԹ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ
 «Խրաբար՝ Տաղանդատը երգիչ
ԱՐԹԻԻՐ "MISTER X"

Տեղի կ'ունենայ
ՇԱԲԱԹ, 1 ՅՈՒՆԻՍ, 2019
 Երեկոյեան ժամը 8:30-են սկսեալ
 «ԿԲՄ»-ի Կեդրոն՝ 1060 N. Allen Ave., Pasadena, California

Տոմսերը ապահովելու համար դիմել
 Կարինէին (626) 755-4773

Մուտք \$60 Ներառեալ ընթրիք

Ո՛չ, Սփիւռքը Անցողիկ Երեւոյթ Մը Չէ. Ահա Փաստարկները

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Յաճախ այսպիսի հարց մը կը հնչէ, թէ ո՞վ եւ ի՞նչպէս պիտի չափէ Սփիւռքի իրական կշիռը: Յայտնի մօտեցում մը կայ, որուն համաձայն, հայ ժողովուրդի հիմնական ներուժը Սփիւռքն է:

Անշուշտ վերջին տարիներուն այս խնդիրը մէկէ աւելի առիթներով «նիւթականացուցեցաւ» ու տարբեր մակարդակներու վրայ քննարկման առարկայ դարձաւ, թէ մինչեւ ե՞րբ ու մինչեւ ո՞ր Սփիւռքը պիտի շարունակէ մնալ Հայաստանի համար «կթան կով» մը, որմէ արժէ միայն օգուտներ քաղել...: Սփիւռքի մտաւորականութեան մէջ կան ձայներ, որոնց համար Սփիւռքի գոյութիւնը, անոր «ճակատագրականութիւն»ը եւ յառաջիկայ տարիներուն հայկական գաղութներուն վստահութեամբ դերն ու գոյութեան ապահովումը անսակարկելի են:

Այս մօտեցումի կողքին ալ, վերջին ամեակներուն մեծ տարածում սկսած է գտնել այն միտքը, որ Սփիւռքը անցողիկ երեւոյթ մ'է եւ ուշ կամ կանուխ պիտի վերանայ...

Անշուշտ այս մօտեցումները արժանի են լուրջ ուսումնասիրութեան, սակայն մօտեցումներուն կողքին պէտք է անպայման հաշուի առնուի այն փաստը, որ առնուազն վերջին յիսուն տարիներուն Սփիւռքը ոչ միայն կարողացաւ հայապահպանութեան առընթեր ուղենշային դեր կատարել, այլ նաեւ

յաջողեցաւ մեր ժողովուրդի ապագայ ծրագիրներուն համար կենսունակ հող պատրաստել:

Հեռու մնալով զգացական մակարդակի գեղումներէ ու ամրագրելով հայկական սփիւռքի ունեցած ձեռքբերումները եւ քաղաքական, մշակութային, տնտեսական, կրթական, կրօնական եւ այլ ոլորտներուն մէջ անոր ստեղծած արժէքները, պէտք է անպայման շեշտաւորել, որ «Հայաստանը անկախ երկիր է, հետեւաբար Սփիւռքը պէտք է մեռնի» մօտեցումը մեղմ ասած արդար մօտեցում մը չէ:

Ճիշդ է, որ Սփիւռքի ինքնանպատակ ըլլալը, անոր ունեցած տնտեսական կարելիութիւններու անուղղուածութիւնը եւ աննպատակաշուկութիւնը խոցելի կրնան դարձնել «Սփիւռքը կարելոր է» գործօնը, բայց այդ ամէնը անպայման չի նշանակեր, որ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ընդհանուր եզրագծին մէջ հաշուութիւնը տակաւին երկար տեսնի մը հա մար կարիքը չունի Սփիւռքի փորձառութեան ու մանաւանդ ներուժին:

Ճիշդ է, որ Սփիւռքը Հայաստանին համար է: Այս դրուածքն արդէն մեծապէս պիտի օժանդակէ վերհանէ, որ Սփիւռքը «մահամերձ» է, որովհետեւ այսօրուան կտրուածքով Հայաստանի ներկայացուցած արժէքը, դերը եւ որպէս անկախ պետութիւն ու պետականութիւն գոյութիւնը ամէն կերպ

խթան է, որ Սփիւռքը ալ աւելի «պնդանայ», հզօրանայ եւ դառնայ զօրեղ գոյութիւն:

Ի դէպ, այս մտորումները լոյսին կու գան ամէն անգամ, երբ աստ եւ անդ Սփիւռքի գոյութիւնը հարցականի տակ առնող մարդիկ հրապարակ կ'ելլեն եւ հերթական անգամ իրենց «ողբասաց»ի դերը կը կատարեն:

Թերեւս այդ հարցադրումները ընդունելը կը սոսկան, կը մտահոգուին կամ նոյնիսկ կը սարսափին, թէ ինչ ճակատագիր կը սպասէ կամ կրնայ սպասել Հայոց Յեղասպանութեան հետեւանքով աքսորի ճամբան բռնած ու ապասփիւռքացած արեւմտեան Հայաստանի հայերուն, մոռնալով, որ անոնք նոյն ժառանգորդներն են Օսմանի գուլումին դիմացած ու դէմ դրած ու մահուան ճանապարհներէն յարուստիւ առած սասունցիներուն, գէյթուցիներուն, հաճընցիներուն եւ տիրապետութիւններուն: Անոնք նոյնպէս անտես կ'առնեն, որ այսօր Լան աշխարհին մէջ հողի բնօրէնը, տեղի զգացումը եւ վայրի ամբողջ պարունակը առաջնական հիմքերով չեն գոյացած:

Անոնք նաեւ կ'անտեսեն Սփիւռքի մեծ աշխարհագրութիւնը, առկայ հաւասարակշռութիւնները եւ պայքարները անսահման լիութիւնը ու այս բոլորին դիմաց Սփիւռքի կուտակած միակորներուն ու ներուժի անկորնչելիութիւնը:

Ճիշդ է, այսօր մեծ փոթորիկներ կը փչեն Միջին Արեւելքի ուղղութեամբ ու այդ պատճառով է հաւանաբար, որ մարդիկ սկսած են թերահաւատ ըլլալ Սփիւռքի այդ կարելոր հատուածի ապագային եւ ճակատագրին համար: Ինչ խօսք կա՞յ, գոյութիւն ունի այս մօտեցումն ալ, սակայն այս բոլորէն ու գրեթէ գուզահեռ պէտք է ամրագրուի, որ այսօր Պէյրութը, Հայկապը, Դամասկոսը, Լաթաքիան ու Քեսապը ամէն գնով պահպանելու մօտեցումը այլընտրանք չունի:

Հողը լքելը, հողին պատկանելու կարելոր զգացումը, ու նա եւ արեւմտեան Հայաստանի կտակն ու ուխտը վառ պահելու հիմնարար սերմը ցանուած է Միջին Արեւելքի այդ հայազաղութներուն մէջ, ու այդ պատճառով է նաեւ, որ այդ գաղութներուն պաշտպանութիւնը եւ ամրութիւնը հաւասարագոր է Հայաստանի ու Արցախի պաշտպանութեան:

Իսկ անոնք, որ Միջին Արեւելքի հայութեան մահը կ'ողբան, լաւապէս պէտք է հասկնան, որ այդ գաղութներուն աւարտի մը հասնելը մեծ հարուած պիտի ըլլայ նաեւ Հայաստանի հայութեան:

Հայկական մտքի, հայկական հոգիի ընդհանուր տրամաբանութեան ու անոր շարունակական պայքարի ակունքներն ունենէ՞լ կարելոր տեղ ունի Միջին Արեւելքի ոգին, որ այսօր կարիք ունի մեզմէ իւրաքանչիւրի նեցուկին, անվերապահ նեցուկին:

Հայ Քաղաքական Մշակոյթի Զարգացումը՝ Խթան Միասնականութեան

ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Հայ ժողովուրդի քաղաքական հասարակաց առաջադրանքները կ'ամբողջացնեն բոլոր տուեալները ի մի խմբելու համար հայ ժողովուրդի բոլոր հատուածները անխտիր ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Բայց հակառակ ճակատագրի նոյնութեան ու տեսլականներու միասնականութեան, ցարդ կարելի չէ եղած իրագործել հայկական սպասուած ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

Այս նշումներով չենք առաջադրեր միատեսակ մտածողութեան մը կամ միակուսակցական դրութեան մը հաստատումը մեր իրականութեան մէջ, ինչ որ ոչ միայն փափաքելի չէ, այլև անկարելի: Հարցը կը վերաբերի ազգային հասարակաց շահերու շուրջ համախոհութեան մը ստեղծման եւ

այդ համախոհութեան շրջագիծին մէջ, հաւաքական աշխատելաձեւի մը յառաջացման, ուր կուսակցական շահերը, որոնք ընդհանրապէս կ'առնչուին իշխանութեան, միշտ տեղի կու տան ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՆ ԾԱՀԵՐՈՒՄԻ առջեւ:

Միասնականութիւնը չ'ենթադրեր նաեւ քաղաքական ընդիմադրութեան լուեցումը: Ընդհակառակն, առողջ ընդիմադրութեան գոյութիւնը ցուցանիչ է տարբեր տեսակէտներու գոյակցութեան եւ առ այդ՝ սատար քաղաքական մշակոյթի զարգացման:

Հայ իրականութեան մէջ ալ գոյութիւն ունին իշխանութեան հարցեր: Անխուսափելի եւ պատմական անհրաժեշտութիւն է այդ: Բայց ինչ որ մերժելի է, իշխանութեան ինքնանպատակ ձգտումն է: Վէճերն ՈՒՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲՆԱԿԱՆ ՈՒ ԱՌՈՂՁ ԵՐԵՒՆԻ ԳՆԱՅՈՒՄԻ ԵՆ ԵՐԲ

կը ծագին ու կը դարձանուին ազգային շրագիծի, ազգային հաստատութիւններու եւ ազգային շահերու լայն պարունակին մէջ:

Երբ կը խօսուի միասնականութեան մասին, անիկա չի վերաբերիր որոշ մակարդակներու վրայ կատարուած ֆոլքլորիք ժողովներուն, որոնք աւելի հանդէսներու կը նմանին քան քաղաքական հանդիպումներու: ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՆ ՏԵՍԼԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԶԳՏՈՒՄԸ ՊԷՏԻ ԶԱՐԳԱՆԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՄԻ ՎՐԱՅ: ԳՈՐԾԻ ԾԱԿԱՏՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ:

Հայ ժողովուրդի բոլոր հատուածներն ալ կը հաւատան Հայաստանի եւ Արցախի մարզի հզօրացման ու բարգաւաճման, ինչպէս նաեւ Հայաստանութեան ճանաչման ու հատուցման պահանջներուն:

րուն, գէթ բոլորն ալ այդպէս կը յայտարարեն, հետեւաբար ամէն հարց պէտք է երկրորդական նկատուի ազգային գերագոյն խոչալնեք ու առջեւ: Դժբախտաբար այդպէս չէ իրականութիւնը:

ՄԵՍ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԷՐ ԺՈՂՈՎՈՐԴ ԵՆՔ, ԲԱՅՑ ԴՎԱՆՍԱԲԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ ՏԱԿԱՒԻՆ ԶՈՒՆԻՆՔ: ՀԵՏԵՒԱԲԱՐ ՆԱԵՒ ԶՈՒՆԻՆՔ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

Հաստատութիւնները կ'օգնեն քաղաքական մշակոյթի ստեղծման, բայց իսկական մշակոյթը կը ստեղծուի կեանքի փորձով, ապրումով, քաղաքական առօրեայ նիստ ու կացով ո՛չ միայն ղեկավարական, այլև ժողովրդային ու փողոցի մակարդակներուն վրայ՝ մանաւանդ ՀԱՇՈՒԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ



We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.



HEALTH



LIFE



COMMERCIAL

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9585

805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815

MaronianInsurance.com

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

ԹԵԼԵԹՈՆ-ԴՐԱՄԱԿԱԼԱՔ ԶԱՎԱԽՔԱԿԱՅՈՒԹԵԱՆՐ ԱԶԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԹԵԼԵԹՈՆ-ԴՐԱՄԱԿԱԼԱՔ
 Կիրակի, Դունիսի 2-ին
 Ժամը՝ 8:00 րգ մինչև 22:00
 ՀԱՅԱԿՏՈՒԹՅՈՒՆ ԶԱՎԱԽՔԱՀԱՅՅԵՐԻ

TELETHON
 Sunday, June 2nd
 From 8:00 am To 10:00 pm
 IN SUPPORT OF THE ARMENIANS OF JAVAKHETI

Organized by Diaspora Unity Platform

Geopolitical TV (Los Angeles) (10.4) AABC TV (Los Angeles) (10.6) AMGA TV (Los Angeles) Noyan Tapan TV (Armenia) (31.7) Noor TV (Fresno) (31.1) Amount TV (Las Vegas)

Օրուայ հրամայականն է այսօր այն, որ հայաստանի ժողովրդավարացման եւ արդարադատութեան համակարգում բեկումնային բարեփոխումներին եւ ընդհանուր աշխարհաքաղաքական զարգացումներին ներդաշնակ, սեւեռունք հայապահպանման եւ ընդհանրապէս սփիւռքեան մարտահրաւէրների վրայ:

Ինչպէս գիտէք սփիւռքահայ համայնքների կառուցուածքը խիստ բազմաշերտ է եւ բազմաբովանդակ: Որքան բազմաբովանդակ են, այդքան էլ տարատեսակ են մարտահրաւէրները: Հիմնական մարտահրաւէրներն են, սոցիալ-տնտեսական, մշակութային եւ անգամ ֆիզիկական գոյատեւման խնդիրները: Սակայն ինչն է այստեղ կարեւորը. դա այն է, որ կարողանալ հասու լինել, ճանաչել եւ ախտորոշել այդ խնդիրները: Այնուհետեւ խնդիրների այն մասը, որ կարելի է ներառել համահայկական օրակարգի շրջանակների կազմում, տառանջատել եւ զգուշօրէն ներառել այդ մեծ օրակարգի կազմում, առանց վնասելու համայնքի գոյատեւման համար ինտէգրման օրինաչափ գործընթացին, իհարկէ հաշուի առնելով նաեւ հայոց պետականութեան ազգային անվտանգութեան շահերը:

Որպէսզի դեկլարատիւ հռետորաբանութիւն չհնչի եւ նիւթը ներկայացուի աւելի առարկայական, անդրադառնանք հայաստանին ամենամօտ գտնուող, բայց ցաւօք անուշադրութեան մատնուած համայնքի մասին:

Զաւախքը իր աշխարհագրական դիրքով եւ հայ ազգաբնակչութեամբ Հարեւան եւ բարեկամ Վրաստանի կազմում, համարում է Հայաստանի հիւսիսային դարպասը յուսալի դարձնող շրջան:

Այստեղ են ծնուել հայ մշակութային երկնակամարի այն աստղերը, ինչպիսին են Շառլ Ազնաւուրը, Լուսինէ Զաքարեանը, Գուսաններ Ջիուանին, Հաւասին, Կարպ Խաչվանկեանը, գրող Վահան Տէրեանը, Դերենիկ Դեմիրճեանը եւ այլքէս շարունակ:

Այսօր լուրջ խնդիր է այն հարցը թէ ինչ անել, որ Հայաստանի հիւսիսային դարպասը ապահովող շրջանը չհամընկնի, եւ հայոց երկնակամարում փայլող աստղերի շքերթը չընդհատուի: Իսկ հայ ազգաբնակչութիւնը մանաւանդ երիտասարդութիւնը ամուր եւ վստահ կանգնի իր հողին:

Զաւախքի հայ համայնքը

ինքնագոյատեւման մեծ ներուժ ունի իր մէջ: Այս շրջանում գոյութիւն ունի նաեւ որոշակիօրէն հակահայկական տրամադրուածութեամբ ապրող ազերի բնակչութիւն: Յիշատակելու արժանի է այն, որ Վրաստանի իշխանութիւնները Հայերի անհանաջ վճռականութեան շնորհիւ ազերիների կամ անգամ թուրքերի ագրեսիւթիւնը սանձում են ազգամիջեան բախումներից խուսափելու համար:

Ընդամենը ամիսներ առաջ, Արցախեան գոյամարտում գոհուած Զաւախքի Միքայէլ Աւագեանի կիսանդրին, հայ համայնքը իր սուղ միջոցների հաշուին տեղադրեց գոհուած հերոսի հայրենի Բաղէշ գիւղի կենտրոնում: Անմիջապէս նշուած տարածքի ազերի կամ թուրք խաթամուժը սկսեցին բողոքել, արձանի տեղադրման դէմ, իսկ բողոքի ֆորմատը, ինչպէս սպասուում էր, հակավրացական ձեւաչափով են ներկայացնում, որպէսզի գրգռեն վրացական իշխանութիւններին հայ համայնքի դէմ: Բայց հայ համայնքի ակտիւ եւ հայրենասէր զանգուածը վճռականօրէն դիմադրեցին եւ պայքարեցին նրանց խափանարար միջոցների դէմ:

Դա յաջողուեց եւ կիսանդրին մնաց իր տեղում եւ բարձունքին:

Ահա «Սփիւռքի Միասնութեան Հարթակի» եւ «Գեոպոլիտիկ Ակումբի» համատեղ ժողովների ընթացքում, ի շնորհիւ, այն կապերի որ գոյութիւն ունէր Չաւախքի հասարակական ակտիւ հետ, առաջացաւ Զաւախքի մարզամշակութային կենտրոնի ապահովման գաղափարը:

Այս հարցը ինչպէս նշեցինք, համահայկական օրակարգում ներառուած խնդիրների շարքին է պատկանում:

Յունիսի 2-ի թելեթոն-դրամահաւաքը նիւթականից աւելի բարոյական աջակցութիւն է Զաւախքի մեր հայրենակիցների համար:

Ուստի յորդորում եւ խնդրում եմ իմ սիրելի հայրենակիցներին, Հնչակեան իմ սիրելի ընկերներին ու ընկերուհիներին, Արմաւիրի Հայրենակցական Միութեան իմ հարազատ ընկերներին չխնայել եւ հնարաւոր առաւելագոյն լուծման ներդնել այս հայրենասիրական-բարեգործական վեհ գործին:

ՍՈՒՐԷՆ ԽՈՒԴԱՆԵԱՆ

Աւաղ Փակուում է Մշակոյթի Մի Օճախ Եւս...



Կլենտէյլի Սուրբ Աստուածածին եկեղեցու գրեթէ կողքին ի թիւս այլ խանութների՝ կայ եւս մէկը, որի ցուցանակը, սակայն, տարբերում է իր բովանդակութեամբ, իսկ խանութն ինքը՝ իր հոգեւոր արժէքներով ու դերով:

Մտնում ես ներս, եւ քեզ անմիջապէս համակում է ակնածանք եւ խոնարհման ցանկութիւն: Այստեղ լուռ է ու խորհրդաւոր, քանզի քեզ շրջապատում են համաշխարհային, սակայն առաջին հերթին մեր ազգային մեծերը եւ ասես շնչում, «ձանաչել գիմաստութիւն եւ գիւրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Հաւանաբար արդէն հասկացաք, որ խօսքը «Պերճ» գրատան մասին է:

Հիմա, երբ խանութը փակելու որոշում է կայացուած, երբ այլեւս չենք մտնելու այդ հայաշունչ օճախը եւ այլեւս չենք լսելու մեր

մեծերի հայրենի բարբառը, սթափուում ես յանկարծ ու մտածում. «Մարդ Աստուծոյ, կարող ես ասել, թէ դու քանի անգամ ես մտել հայ մշակոյթի այդ համեստ տաճարը, դնել ես արդեօք հեքիաթների գէթ մէկ գիրք՝ քո զաւակին ուրախացնելու համար, ձեռքդ առել եւ գէթ մէկ անգամ թերթե՞լ ես հայ դասականների հատորներից մէկը, ընտրել ես արդեօք հայկական նաշխաբերով զարդարուն եւ Հայաստանից բերուած մէկ բացիկ՝ հարազատիդ տարեդարձը շնորհաւորելու ցանկութեամբ տողորուած: Առաւել եւս երբեք է նոյնիսկ մէկ սենթի օգտու տուե՞լ ես մշակոյթի այդ համեստ կեդրոնին՝ թէկուզ ազգաշահ գործ կատարելու ազնիւ մտադրութեամբ: Աւաղ, այսօր աւելորդ է խօսել այդ մասին, քանզի խանութը, ցաւօք շուտով ընդ-

Շար.ը էջ 18



Իր 40-րդ Տարեդարձին առիթով
ՀԲԸՄ ՍԱԹԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ
 (ՆԱԽԱՊԵՍ ԱՐՏԱՄԱՁԴ)
 Կը մերկայացնէ՝

ՓԱՐԱՏԻՍՕ ԳԱՆԴՈՒԿ

Կատակերգութիւն երեք արարով

Հեղինակ՝
 ԺՈՐՃ ՖԵՅՏՕ ԵՒ ՄՈՐԻՍ ՏԵՎԱԼԻԵՐ
 Բեմադրիչ՝
ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

In Celebration of the 40th Anniversary of Its Founding
AGBU SATAMIAN THEATRE GROUP
 (FORMERLY ARDAVAZT)
 presents

HOTEL PARADISO

A comedy in 3 acts by
GEORGES FEYDEAU and MAURICE DESVALIERE
 Directed by
KRIKOR SATAMIAN

ՅՈՒՆԻՍ 15-16 / 22-23, 2019 **JUNE 15-16 / 22-23, 2019**
 ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան
 Կատարողական Արուեստից Կեդրոնին ՍԷԿ
 2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104
 Գարաք օրերը ժամը 8:00-ին, Կիրակի 6:00-ին
 AGBU Vatche & Tamar Manoukian
 Performing Arts Center
 2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104
 Saturday performances at 8:00 pm, Sundays at 6:00 pm

Տոմսերը կարելի է ապահովել / Tickets available at:
WWW.AGBUPAC.ORG/CALENDAR
 Մուրցի Խուր / Donation \$30

PM Pashinyan Calls for Radical Justice Reforms, Demands Former Regime Appointed Judges to Resign



YEREVAN (RFE/RL) — Prime Minister Nikol Pashinyan on Monday demanded a mandatory “vetting” of all judges in Armenia and said many of them must already resign because they are connected to the country’s former leadership and not trusted by the public.

“The people of Armenia perceive the judicial authority as a remnant of the former corrupt system in which plots against the people are constantly hatched and executed,” Pashinyan said in live televised remarks. “To what extent this theory is true and substantiated is a different matter.”

“But the fact is that the judicial authority does not enjoy the people’s trust and therefore lacks sufficient legitimacy to act, which now poses a direct threat to the normal life, stability and national security of our country,” he declared at an emergency meeting with senior government and law-enforcement officials and lawmakers.

“Unfortunately, I can’t conclude that the judicial system is not subjected to shadowy and illegal influences mainly coming from the former corrupt system because these two systems are connected to each other through human, political and other ties,” added Pashinyan.

In particular, he said, Armenian courts have validated “dozens of illegalities” which he said were committed by the former ruling regime.

All judges must therefore undergo “vetting,” he said. “That is, the public must have full information about the judges’ political ties, origin, property status and activities as judges and in their previous capacity, and their individual and professional traits,” explained the prime minister.

The judges whose decisions have led to rulings against Armenia handed down by the European Court of Human Rights (ECHR) “must resign, leave or be sacked,” Pashinyan went on.

“All those judges who know deep down that they cannot be impartial and objective must resign and thereby provide an important service to the Republic of Armenia and its people,” he added.

The emergency meeting chaired by Pashinyan came as his supporters blocked the entrances to court buildings in and outside Yerevan, acting on his appeal made on Sunday. Pashinyan urged them to end the blockade in a live Facebook transmission aired right after the meeting. He said the unprecedented action, condemned by the Armenian opposition as unconstitutional, “served its purpose.”

The premier called for the court blockade one day after an Armenian court ordered his bitter foe and former President Robert Kocharian freed from custody pending the outcome of his trial on charges stemming from the 2008 post-election violence in Yerevan.

On Tuesday, the court suspended Robert Kocharian’s trial because of what it called a possible contradiction between the Armenian constitution and coup charges brought against the former president.

In a decision posted on an official website, the judge presiding over the trial, Davit Grigorian, cited a “suspicion of discrepancy” between three articles of the constitution and prosecutors’ claims that Kocharian illegally seized power in the wake of the election. He said he has therefore asked the Constitutional Court to pass judgment on that suspicion.

Pashinyan’s political allies and supporters reacted furiously to Kocharian’s release, accusing the judge who ordered it of having ties to the ex-president and the country’s other former rulers. Kocharian’s lawyers say it is the current authorities that have pressured courts to keep their client in detention on coup charges which he rejects as politically motivated.

Pashinyan did not explicitly mention Kocharian’s release in his public statements. But he did state on Monday that Armenian courts cannot be “objective” when dealing with the 2008 unrest case.

He argued that the Strasbourg-based ECHR has ruled in favor of some of the former opposition politicians

ղիկոս ըլլալէն ետք ոչ մէկ խօսք լուեցաւ իրմէ խնդրոյ առարկայ թեմերու խախտումի եւ անոնց կանոնական տիրոջ վերադարձնելու մասին:

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Գարեգին Բ Կիլիկիոյ Կաթողիկոսին մէկ Աթոռէն միւս Աթոռ անցնիլը եղաւ անակնկալ, գաղտնի, եւ հապճեպ, նկատի ունենալով Կիլիկիոյ միաբանութեան բոլորովին անտեղեակ ըլլալը, որուն հետեւանքով եթէ պահ մը շփոթութեան մատնուեցան, իրենց կողմէ սակայն խնդրին մասնաւոր կարեւորութիւն չտուին եւ ոչ ալ մտահոգութիւն չայտնեցին: Իրենց կը մնար պարզապէս յաջորդ կաթողիկոս մը ընտրել, եւ այդպէս ալ ըրին: Այդ անակնկալ կացութեան ետին կար նորանկախ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան որ լիովին զօրավիզ կանգնեցաւ պետական իր հեղինակութեամբ, իբր թէ «վստահեցնելով» որ Գարեգին Բ Կիլիկիոյ Կաթողիկոսը պիտի ընտրուէր Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ միահեծան ու միացեալ Հայ Եկեղեցին պիտի վերականգնէր, միամիտ, չըսելու համար անգիտակ, անպատասխանատու, եւ անիրատես դուրս գալով: Նման անիրատես եւ անփոյթ աճապարանք Գարեգին Կաթողիկոս ինք շատ լաւ գիտէր, եւ սակայն լուեցայն կ'ընդունէր ու կը համաձայնէր իր փափաքը իրագործելու՝ բազմելու համար Հայ Եկեղեցւոյ բարձրագոյն Աթոռին: Հայրապետը յայտնապէս կարիքը ունէր նաեւ ձեռքադրուելու Անթիլիասի քաղաքական կաշխատութեանն ուրուն պատճառով իր որոշ ծրագրերները չէր կրնար իրագործել: Եթէ իր կողմէ յարմարագոյն թեկնածուն ինք պիտի ըլլար, այսուհանդերձ մէկ Աթոռէն միւսը անցնիլը, գաղտնի կերպով եւ հակառակ իր կատարած կանոնական ուխտին Կիլիկիոյ Աթոռին նկատմամբ, պատմութեան մէջ կը մնայ անբնական եւ բացասական:

«Էջմիածին» ամսագրէն քաղելով ընտրութեան մանրամասնութիւնները, յայտնի կը դառնար որ Գարեգին Կաթողիկոսին համար առաջին նիստին այնքան ալ նպաստաւոր չեն եղած արդիւնքները, լրջօրէն մտահոգելով գինք, երբ Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեան, երկրորդ ամենաբարձր քուէներ հաւաքած թեկնածուն, առանց սպասելու կանոնական ելքին եւ ընտրութեան աւարտին, ընդմիջելով ընտրութեան ընթացքը, իր կողմէ կը շնորհաւորէր Գարեգին Կաթողիկոսը, ըսելով որ «ինձ թվում է այսօր պէտք է աւարտենք այս ընտրութիւնները եւ իմ կողմից ես ուզում եմ շնորհաւորել Վեսափառ Հօր որպէս նորընտիր Հայրապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց», վստասբար Լեւոն Տէր Պետրոսեանի պահանջին վրայ, երբ Կաթողիկոսը չէր հաւաքած տակաւին քուէներու կէսէն մէկ

աւելին: Հարցական կը մնայ նաեւ այն կէտը թէ ժողովին նախագահող Տեղակալ Սրբազանն ու դատաւոր առեւտրապետը ինչպէս լուեցան թոյլ տուին եղած միջամտութեան:

Գարեգին Բ Կիլիկիոյ Կաթողիկոսին Անթիլիասէն մեկնումին վրայ բնական եւ կանոնական կերպով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կը մնար ձեռնարկել յաջորդ կաթողիկոսի ընտրութեան: Այնտեղ կատարուած իր լուծման հասաւ հակառակ ուղղութեամբ, երբ նորընտիր Գարեգին Ա Կաթողիկոս առաջին պատեսութեամբ 1995 Յուլիան աճապարեց Անթիլիաս վերադառնալ օծելու համար իր յաջորդը Տ.Տ. Արամ Ա Կիլիկիոյ Կաթողիկոսը:

Նոր Ձեռնարկներ

Նորընտիր Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր քառամեայ գահակալութեան ընթացքին, վերջին տարին բոլորովին հիւանդ, Միւռնոսօրհնէք մը կատարեց եւ վեց երիտասարդ վարդապետներ եպիսկոպոսութեան բարձրացուց նորահաստաւ հայրենի թեմերուն որպէս թեմակալներ: Անոնց մէջ ակնառու եղաւ Արագածոտնի թեմի վերականգնումը, Օշականի ուխտավայր եկեղեցւոյ նորոգութիւնը, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անուան Դպրատունը, եւ թեմի նորակազմ առաջնորդարանի շէնքը: Արտասահմանեան Հայրապետական այցելութիւններ տուաւ մինչեւ Աւստրալիա անգամ մը, եւ Միացեալ Նահանգներ յաճախ, ուր Ամերիկահայ Թեմի հաստատման հարիւրամեակի (1898-1998) հանդիսութեանց նախագահեց Նիւ Եորքի Ս. Վարդան մայր տաճարին մէջ: Նոյն առիթով պետական անձանց ներկայութեան էլիս Այլընտի բարձր մակարդակի ընդունելութեան սրահին մէջ անգլերէն լեզուով պատմական բացման ճառ մը արտասանեց: 1996 թուին երկու անգամ Ամերիկայի մեր թեմը այցելեց, առաջինը Փետրուսին իմ օրով Ֆլորիտայի Ս. Դաւիթ եկեղեցւոյ համայնքը ուր հովիւ կարգուած էի, կատարելու դպրոցաշէնքի հիմնարկէքը, բարերարութեամբ եւ ներկայութեամբ Ալեք Մանուկեանի, եւ երկրորդը Յուլիան նոյն տարին, յատկապէս նախագահելու հանգուցեալ ՀԲԸ Միութեան Յիւսէպ Նախագահ եւ մեծ բարերար Ալեք Մանուկեանի յուղարկաւորութեան Տիթրոյիթի մէջ:

Պաշտօնական այցելութեամբ գնաց նաեւ Վատիկան եւ Հռոմի Յովհաննէս-Պողոս Բ Քահանայապետին հետ երկու եկեղեցիներու մերձեցման միջեւ խնդրայարոյց համաձայնագիր մը ստորագրեց որուն արձագանքը չլուեցաւ ու մոռացութեան տրուեցաւ: Իր դժբախտ հիւանդութեան մէջ կարող եղաւ Միւռնեաց Նորավանքի նորոգեալ վիճակը տեսնել, իրագործուած իր միջնորդութեամբ եւ բարերարութեամբ Տիգրան եւ Տիլին Հաճէթեաններու, կատարելով օժման կարգը: Նոյն տարին 1999-ի Յունիսին Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս դժբախտաբար կանխահաս կը վախճանէր Մայր Աթոռի մէջ ի հետեւանս անողոք հիւանդութեան:

Երեւանի Պետական Համալսարանի Հիմնադրման 100-ամեակին Նուիրուած Ձեռնարկները Մեկնարկեցին Գիւմրիէն



Գիւմրիի վարդանանց հրապարակին վրայ, ուսանողական ցուցադրական բեմադրութեամբ՝ ազդարարուեցաւ Երեւանի պետական համալսարանի (ԵՊՀ) հիմնադրման 100-ամեակին նուիրուած ձեռնարկներու մեկնարկը: Այս մասին կը հաղորդէ Armenpress.am-ը:

Ուսանողները զանազան ոճերու երաժշտութեան հետ հանդէս եկան պարային կատարումներով՝ տօնական տրամադրութիւն փոխանցելով գիւմրեցիներուն եւ հրապարակին վրայ գտնուող զբօսաշրջիկներուն: Ուսանողները նաեւ համալսարանի 100-ամեայ գործունէութեան մասին պատմող տեղեկատուական գրքոյկներ բաժնեցին անցորդներուն:

Հայաստանի Մայր համալսարանի յոբելեանին նուիրուած ձեռնարկները համակարգող յանձնաժողովը մեկնարկը որոշած է սկսիլ Գիւմրիէն, որովհետեւ ճիշդ այս քաղաքին մէջ էր, որ 16 Մայիս 1919-ին Հայաստանի Հանրապետութեան նախարարներու խորհուրդը Երեւանի մէջ համալսարանի հիմնելու վերաբերեալ որոշում տուած էր: 31 Յունուար 1920-ին, Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գիւմրի) առեւտրական դպրոցի շէնքին մէջ, մեծ շուքով կատարուած էր Հայաստանի համալսարանի բացման հանդիսաւոր արարողութիւնը, որուն մասնակցած էին Հանրապետութեան ղեկավարները եւ արտասահմանէն բազմաթիւ հիւրեր: Համալսարանական դասերու մեկնարկը տրուած էր նշանաւոր հայագէտ Ստեփան Մալխասեանցի՝ 1 Փետրուար 1920-ին կարդացած դասախօսութեամբ:

Առաջին ուսումնական տարեշրջանին, համալսարանը ունեցած է մէկ՝ պատմաբանական բաժանմունք, 262 ուսանող եւ 32 դասախօս: Ի պատիւ համալսարանի առաջին տնօրէն Եուրի Դամբարեանի՝ հիմնադրման առաջին իսկ տարին համալսարանին մէջ դասախօսելու հրաւիրուած էին արտասահմանեան համալսարաններ աւարտած, մանկավարժական ու գիտական աշխատանքի փորձառութիւն ունեցող այնպիսի անուանի մասնագէտներ, ինչպիսիք էին՝ Յակոբ Մանանդեան, Մանուկ Աբեղեան, Ստեփան Մալխասեանց եւ ուրիշներ: Հայաստանի մէջ խորհրդային կարգերու հաստատումէն ետք, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան առաջին լուստոգիտ (կրթութեան նախարար) Աշոտ Յովհաննիսեանի «Երեւանի համալսարանի վերակազմութեան մասին» հրամանով, 17 Դեկտեմբեր 1920-ին, Հայաստանի համալսարանը վերանուանուեցաւ Երեւանի ժողովրդական համալսարան: Երեւանի մէջ վերաբացուած համալսարանի տնօրէն ընտրուեցաւ հայագէտ Յակոբ Մանանդեան:

Երեւանի պետական համալսարանի յոբելեանական յանձնաժողովին նիստը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 16 Մայիսին, Գիւմրիի նոյն կառուցիւն մէջ: Ողջունելով միջոցառման բոլոր մասնակցողները՝ համալսարանի տնօրէն Արամ Միմոնեան անդրադարձաւ յոբելեանական տարուան ձեռնարկներուն եւ հրապարակումներուն:

«Բուն հիմնական տարուայ միջոցառումների յանձնախումբն արդէն 3 տարի է ստեղծուած է եւ միջոցառումները, ըստ ծրագրածի՝ ընթանում են, իսկ դրանք բազմաբնոյթ ու բազմաբովանդակ են: Շատ յազեցուած», նշեց Միմոնեան՝ առանձնացնելով 26-28 Մեպտեմբեր ծրագրուած ձեռնարկները: Մինչ այդ կը վերանորոգուի բուն հիմնադրարկը՝ յարկի դահլիճը, կը գումարուին միջազգային գիտաժողովներ, ընդունելութիւններ, պարզեւտրումներ եւ մշակութային ձեռնարկներ:

«Վերջին 15 տարիների ընթացքում բուն մեծ նուաճումներ է ունեցել: Յուսանք այդ նուաճումները կը շարունակուեն ու կը գտնուեն նուիրեալներ, ովքեր կը շարունակեն այդ ազգասէր գործը: Համալսարանը առաջընթաց ապրող օրգանիզմ է», իր խօսքին մէջ նշեց Երեւանի պետական համալսարանի հայ բանասիրութեան ամպիոնի տնօրէն Արծրուն Աւագեան:

Ճիշդ է շատ բան փոխուած է արդէն, որովհետեւ ՀԱԼԱՄԱԿԱՆ ՄԵՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇ ՀԱՍՈՒՆՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԾ է ՄԵՋԻ, իսկ այս առումով ԹԱԻՇԵԱՅ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ ԼԱՒԱՏԵՍՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԷՋ ԲԱՅԱԾ Է ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ, բայց տակաւին սկիզբն

ԹՈՒՄՕ-ի Տնօրէնը Արժանացաւ Ֆրանսայի «Ասպետ» Կոչման



Չորեքշաբթի, 15 Մայիսին, Փարիզի քաղաքապետ Անն Իտալիօ ԹՈՒՄՕ-ի տնօրէն Մարի Լու Փափագեանին յանձնեց Ֆրանսայի Հանրապետութեան պատուաւոր «Palmes Academiques» մրցանակը ու «ասպետ» կոչումը:

«Առանց քեզ, Մարի Լու, ԹՈՒՄՕ-ն գոյութիւն չէր ունենար ո՛չ

Հայաստանի, ո՛չ Փարիզի մէջ: Եթէ այս մետալը պէտք է ստեղծուէր, անհրկա պէտք է ըլլար քեզի համար: Դուն աշխարհի քաղաքացի եմ: ԹՈՒՄՕ կը նշանակէ ազատութիւն: Անհրկա աշխարհի լաւագոյն դպրոցն է: ԹՈՒՄՕ-ի խումբը շատ հպարտ է», - ըսաւ Անն Իտալիօ եւ շքանշանը յանձնեց Մարի Լու Փափագեանին:

Եսփիշեհիի Սիւրիիսար Գաւառին Մեջ Գտնուող Սուրբ Երրորդուօրին Հայկական Եկեղեցին Բազմաթիւ Այցելուներ Կուցենայ



Էսփիշեհիի Սիւրիիսար գաւառին մէջ գտնուող Սուրբ Երրորդուօրին Հայկական Եկեղեցին վերջերս բազմաթիւ այցելուներ կ'ունենայ: Այդ մասին, ըստ Akunq.net-ի, կը հաղորդէ թրքական «Սպաս» պարբերականը:

Արբիւրին համաձայն՝ սոյն եկեղեցին կառուցուած է 1650 թ., իսկ 1876 թ.՝ վնասուած է հրդեհի պատ-

ճառով: Այն վերանորոգուած է 1881 թ., Պոլսոյ Հայոց պատրիարք Ներսէս Վարժապետեանի օրօք, ճարտարապետ Մինթեա Փանոյաթի կողմէ:

Կարմիր տաշած քարերէն պատրաստուած սոյն եկեղեցին կը կրէ նաեւ Բըզըլ քիլիսէ՝ Կարմիր եկեղեցի անունը: Այն համարուած է տուեալ տարածաշրջանի երրորդ ամենամեծ եկեղեցին:

ենք քաղաքական ինքնուրոյն եւ տեսլապաշտ մշակոյթի ստեղծման ճամբուն:

Մինչ թրքական եւ ազերիական սպառնալիքները, ինչպէս նաեւ՝ արտագաղթի եւ սիւրբի օտարացման վտանգները դամոկլեան սուրի նման կախուած կը մնան մեր

զլխուն վրայ, անդին մենք չենք կրնար, իրաւունք չունինք կողմանակի հարցերով զբաղելու: Անմիաբանութեան դրսեւորումները քաղաքական տհասութիւն միայն կ'արտայայտեն եւ կ'ընթանան ԳՈՅՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ճիշդ հակառակ ուղղութեամբ:

Հայ Քաղաքական Մշակոյթի Ձարգացումը

Շարունակուած էջ 7-էն

ՀԱՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ԼՄԱԿՆԵՐՈՒ ԱՇԽՈՒԺԱՅՈՒՄՈՎ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԱՐԳԱԿՎ ՎՐԱՅ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՈՒՆՏԻ ՄՇԱԿՈՒՄՈՎ ԱՐՏԱՔԻՆ ՃԱԿԱՏՆԵՐՈՒ ՎՐԱՅ:

Ճիշդ է շատ բան փոխուած է արդէն, որովհետեւ ՀԱԼԱՄԱԿԱՆ ՄԵՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇ ՀԱՍՈՒՆՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԾ Է ՄԵՋԻ, իսկ այս առումով ԹԱԻՇԵԱՅ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ ԼԱՒԱՏԵՍՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԷՋ ԲԱՅԱԾ Է ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ, բայց տակաւին սկիզբն

Հ.Բ.Ս. Վառէր Թատր Մարտիան Վորժբորտ 10-րդ դարու 10-րդ տարեկան խումբը ԿԵ ԿԵՄԵՐՈՒՄ

Պարոյր Մ. Հայկական Քաղաքացիական Մեջ

Կիրակի, 26 Մայիս, 2019
Ժամը՝ 5 կ.հ.

Մեր Մերոյ Մերանը

Պէշկեօթիսեան կեդրոնի Սրահին մէջ: 1901 N. Allen Ave., Altadena, CA 91001

«Փոքրիկ Հրեշտակներ» Շարաթորեայ Դպրոցի 2018-2019 Ուսումնական Տարին

Ամերիկայի Միացեալ Նահանգներում հայապահպանութեան ու ազգային ինքնութեան կարեւոր դերակատարներից են հայկական դպրոցները, որոնք նաեւ կարեւոր օղակն են աշխարհասփիւռ հայութեան եւ հայրենիքի միջեւ: Այս կարեւոր առաքելութեան հիմնասյունը մշտապէս եղել եւ մնում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ իր թեմերով եւ եկեղեցական կառույցներով:

Շուրջ ինը տասնամեակ այս սրբազան ծառայութեան ջահակիրներէրց է Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմը, որի կրթական, հոգեւոր ու ազգային կեանքն էլ աւելի աշխուժացաւ թեմի բարեխնամ առաջնորդ, գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէր-տէրեանի անբասիր ու հայրենաշէն ջանքերով: Այն հոգածութիւնը, շնչադրութիւնն ու հետեւողականութիւնը, որ ցուցաբերում Սրբազան Հայրը հայ մանուկների կրթութեան, հոգեւոր ու հայեցի դաստիարակութիւնը անհերքելի իրողութիւն է: Եւ նման հոգեւոր հոր հայրական հովանու ներքոյ ծառայելն ու սովորելը պատիւ է եւ բախտաւորութիւն:

Առաջնորդ Սրբազան հօր օրհնութեամբ Արեւմտեան թեմում գործում են բազմաթիւ շաբաթօրեայ եւ կիրակնօրեայ վարժարաններ, որոնցից ամենամեծն առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց մայր տաճարի «Փոքրիկ հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցն է, որտեղ սովորում են տարբեր տարիքի շուրջ երեք հարիւր աշակերտ: Այն աշխարհի միօրեայ ամենամեծ հայկական կրթական հաստատութիւնն է: Դպրոցը որդեգրել է Հայաստանի Հանրապետութեան հանրակրթական դպրոցների դասագրքերը եւ ծրագրերը պատշաճեցուցել են Գալիֆորնիայի կողմից սահմանուած լեզուների ուսուցման հիմնական չափորոշիչներին: Կրթօճախն ունի վեց դասարան, որտեղ սովորող երեխաները բաշխուած են ըստ լեզուի իմացութեան: Ուսումնական տարուայ տեւողութիւնը տասամիս է: Դպրոցը 2015թ.-ին Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարարութեան կողմից ճանաչուել է որպէս Մայրենի լեզուի պահպանման լաւագոյն հաստատութիւն եւ արժանացել գլխաւոր մրցանակի եւ դիպլոմի: Վարժարանի աւարտական վկայականը ամերիկեան հաստատութիւնների կողմից ճանաչուած է որպէս երկրորդ օտար լեզուի վկայագիր:

Վերջին տարիներին ուսումնական մակարդակի միօրինականացման ու զարգացման նպատակով Առաջնորդարանի գիտակրթական յանձնախումբը՝ գլխաւորութեամբ դոկտոր Էլլի Անդրէասեանի, համակարգում է թեմապատկան դպրոցների գիտական ծրագրերը, կազմակերպում եւ իրականացնում ուսուցիչների ամենամեայ վերապատրաստման դասընթացներ: Վերջիններս նպատակ ունեն մանկավարժներին մատուցելու վերջին գիտական ու կրթական նորութիւնները եւ դրանք աշակերտներին փոխանցելու վարպետութիւնը:

«Փոքրիկ հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցը եկեղեցու ապահով ու լուսափիւռ յարկի ներքոյ իրականացնում է հետեւողական,

լուրջ ծրագիր, որը միտում ունի պատշաճ կազմակերպելու եւ կեանքի կոչելու ազգային արժէքների եւ ոսկեղենիկ մայրենի պահպանման ու տարածման պատասխանատու առաքելութիւնը: Այս չափազանց կարեւոր աշխատանքին իրենց մեծ նուիրումն են բերում նաեւ դպրոցի բազմափորձ եւ արհեստավարժ ուսուցիչներն ու ողջ աշխատակազմը՝ գլխաւորութեամբ դպրոցի տնօրէն, բարեշնորհ Յովհաննես սարկաւազ Գուժրույեանի, որի անմիջական հսկողութեամբ, անձնուէր ու անսպառ նուիրութեամբ դպրոցի աւօրեան դառնում է հետաքրքիր ու բովանդակալից:

Օրն սկսում է Ս. Ղեւոնդեանց մայր տաճարի հովիւ, արժանապատիւ տէր Խաժակ քահանայ Շահազեանի հետաքրքիր ու խրատական հոգեւոր գրոյցով ու աղօթքով: Դասերի ընթացքում աշակերտները մասնակից են լինում խօսքի կառուցման, մայրենի բառապաշարի հարուստ հնչեղութեանը, որը իւրօրինակ փորձ է հնչեցնելու եւ տարածելու մեր սուրբ մայրենին: Հարկ է նշել նաեւ, որ հաստատութիւնն իր առջեւ նպատակ է դրել ոչ միայն հայոց լեզուի իմացութեան, այլեւ հայոց պատմութեան, մշակութիւնի եւ ազգային երաժշտութեան նիւթերի ուսուցմանն ու զարգացմանը: Դրա վառ վկայութիւնն են գրական, կրթական եւ համայնքային միջոցառումների, ինչպէս նաեւ հանդէսների պատշաճ մակարդակով անցկացումն ու իրականացումը:

Ողջ ուսումնական տարուայ ընթացքում աշակերտները պատրաստուած եւ ներկայացնում են տարբեր թեմաներով անհատական եւ խմբակային աշխատանքներ՝ նուիրուած Հայաստանին, հայ մշակութիւն, հայոց պատմութեանը: Դրանք մանուկների ձեռքով պատրաստուած ու ձեւաւորուած պատաններ, համակարգչային յղումներ են, որոնք մեծ հետաքրքրութիւն ու աշխուժութիւն են մտցնում դպրոցական աւօրեայում:

Անցնող ուսումնական տարուած տեղի ունեցան մի շարք ներդասարանային եւ համայնքային միջոցառումներ՝ նուիրուած Երեւանի 2800 ամեակին, աշնանն ու զարնանը, նրանց գոյներին, Զատիկին, Յովհաննէս Թումանեանի եւ Կոմիտասի ծննդեան 150-ամեակներին, Երեւանի մատենադարանին, եղան նաեւ անհատական արուեստի աշխատանքներ ու ազգային աւանդական տարազների վերաբերեալ ցուցադրումներ:

2018 թ.-ի Դեկտեմբերի 22-ին տեղի ունեցաւ Ս. Մննդեան եւ Ամանորի հանդէսը, որին մասնակցում էին բոլոր դասարանների աշակերտները: Ներկաները ունկնդրեցին աշակերտների գեղեցիկ արտասանութիւնները, երգերը՝ նուիրուած օրուայ խորհրդին: Երեխաներին այցելեց Ձմեռ պապը եւ իր հետ բերեց այնքան սպասուած նուէրները: Ապա Առաջնորդարանի «Թրբանջեան» հրապարակում տօնական եղեւնու շուրջ կազմակերպուած հիւրասիրութիւնն ուղեկցուեց երգ ու երաժշտութեամբ՝ շարունակելով բարձր տրամադրութիւն հաղորդել ներկաներին:

Աշակերտները տարին մի քանի անգամ մասնակցում են նաեւ կիրակնօրեայ պատարագներին, որ-



նոցից չիշատակելի է Մակագարդի թափօրը եւ Մանուկների օրհնութեան կարգին մասնակցելը:

Աւանդութեան համաձայն, Ապրիլի 24-ի մերձակայ շաբաթ օրն աշակերտները հաւաքուած են Տաճարին կից Սրբոց Նահատակաց խաչքար յուշարձանի շուրջ, ուր ծաղիկներ են խոնարհում եւ յարգանքի տուրք մատուցում անմեղ ու սուրբ նահատակներին:

Աշակերտների գիտելիքներն ամփոփուած են տարեկան աւարտական քննութիւններով, որոնք աշակերտները յանձնում են փայլուն առաջադիմութեամբ, որին հետեւում է ամավերջին հանդէսը: Այս տարի այն տեղի ունեցաւ Մայիսի 18ին եւ բաղկացած էր երկու մասից: Բացման խօսքով հանդէս եկաւ տնօրէն, բարեշնորհ Հովհաննէս սարկաւազ Գուժրուեանը, ով իր շնորհակալական խօսքն ուղղեց Առաջնորդ սրբազանին, եկեղեցու հովուին, ծնողներին, աշակերտներին, ուսուցիչներին ու դպրոցի անձնակազմին:

Առաջին դասարանցիներն իրենց մանկական շուրթերից հնչեցրին քաղցրիկ մայրենին եւ խոստացան հավատարիմ մնալ Մաշտոցի պատգամներին: Ապա եկեղեցում տարածուեց նրանց երգն ու երաժշտութիւնը՝ ներկաներին պարգեւելով մեծ յուզականութիւն եւ ոգեւորութիւն: Հանդիսութեան աւարտին փոքրիկներին յանձնուեց «Տառածանաչութեան վկայականներ»: 2-5-րդ դասարանի աշակերտներն իրենց անհատական եւ խմբակային հայրենասիրական երգերով

գունաւորեցին միջոցառուման երկրորդ մասը, իսկ 6-րդ դասարանի աշակերտները ոգեկոչեցին հայութեան եօթ հրաշալիքները՝ սիրով ու ջերմութեամբ խօսելով մայրութեան, հայոց լեզուի, հայրենասէր հերոսների ու հայրենիքի մասին: Յայտագիրը յագեցած էր ճոխ գեղարուեստական կատարումներով: Ապա արժանաշնորհ տէր Խաժակ քահանայ Շահազեանը, ներկաներին ընթերցեց առաջնորդ Տ. Յովնան սրբազանի գնահատանքի եւ օրհնութեան գիրը եւ փոխանցեց նաեւ իր ջերմ բարեմաղթանքները:

Աւարտին 6-րդ դասարանի աշակերտներն ստացան աւարտական վկայականներ, որից յետոյ բալորը մասնակցեցին տօնական հիւրասիրութեան:

Օրուայ խորհուրդն ամփոփուեց «Թրբանջեան» հրապարակում, որտեղ շրջանաւարտները գունաւոր փուչիկներ արձակեցին եւ իրենց գլխարկները օդում պտտելով ազգարարեցին իրենց շրջանաւարտ լինելը:

Հետեւում մնացին հանդիսութեան յուզականութիւնն ու հանդիսաւորութիւնը, բայց բոլորի աչքերում կար թաքուն ու խորհրդավոր լուսութիւն, որը հրաժեշտ էր հարազատ դարձած դպրոցին ու ուսուցիչներին՝ միեւնոյն ժամանակ յոյսով ու հաւատքով, որ նոր ուսումնական տարին, որ մենկարկելու է Օգոստոսի 17-ին, լինելու է նոյնքան յաջողակ եւ արգասաբեր:

Ռիմա Եսայեան
Ուսուցչուհի

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Պր. Արեգ Յարութիւնեան Ընդ Օր. Անի Պալայեան
Ամուսնացեալք, Մայիս 18, 2019, Կլենտոյլ

Մեր ջերմ շնորհաւորութիւնները ամուսնացեալ գոյգին եւ անոնց ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորապէս «Մասիս» շաբաթաթերթի աշխատակիցներէն Տէր եւ Տիկ. Ներսէս Պալայեանին:

Յայտարարութիւն

Յունիսի 22-23-ը Տաւուշի մարզի Դիլիջան քաղաքում տեղի կ'ունենայ ՀՀ կառավարութեան կողմից իրականացուող ներդրումային համաժողով՝ «Իմ քայլը յաճում Տաւուշի» խորագրով: Այն նպատակ ունի տեղի եւ օտարերկրեայ ներդրողներին ներկայացնել մարզի հեռանկարային եւ գերակայ ոլորտների ներուժը, նպաստաւոր գործարար միջավայրի ապահովման գործիքները, ներդրումներ ներգրաւելու, նոր գործարար կապեր հաստատելու, ինչպէս նաեւ փորձի փոխանակման միջոցով արդիւնաւետ նոր քիզնետ-մոդելներ ստեղծելու հնարաւորութիւնները: Միջոցառմանը նախատեսուած է ՀՀ վարչապետի մասնակցութիւնը:

Հետաքրքրուած անձինք եւ կազմակերպութիւնները կարող են դիմել ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւն՝ հետեւեալ հեռախոսահամարով:

818-265-5900 x 307

ԸՆԿԵՐ ԱՐՈՍ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ՅԻՉԱՏԱԿԻՆ

Շուրջ քառասուն օրեր առաջ, Հնչակեան Կուսակցութեան մեծ ընտանիքը կորսնցուց իր հաւատաւոր գաւազաններէն մին՝ ընկեր Արտօն:

Անոր երկրային կեանքը, դեռ նախաերիտասարդական տարիներէն, անբակտէրիօրէն շարժապարտեց իր սիրելի շրջանակին հետ: Կուսակցութիւն, Հ.Մ.Մ., Ն.Ս.Մ.Մ., Կիլիկեան Կրթական Հաստատութիւն դարձած էին իր ամէնօրեայ նիւթերը: Երբեմնի Հալէպի եռուն գաղութին մէջ աչքի կը զարնէր իր շեշտուած գաղափարականութեամբ եւ իր հերթին կը սատարէր այդ հայատրոփ գաղութին աշխուժացման: Հայկական անցնող ամէն Հնչակեան ընկեր, տեղ մը, պահ մը, առիթով մը անպայման կը հանդիպէր անոր: Ըլլայ ակումբի մէջ, Ժողովի Ժամանակ, ընկերային հաւաքի կամ միութենական ձեռնարկի մը ընթացքին, անոր հանդիպելը դարձած էր անզիր օրէնք: Եւ թէ յաջող էր միութենական ընթացքը, աչքերու պլպլացումը կը մատնէր իր հոգեկան բերկրանքը: Բայց, ձգտելով աւելի լաւին, ուզելով տեսնել կատարեալը, չէր կրնար ծածկել իր խռովքն ու մտահոգութիւնը:



Յիրուցան եղան ընտանիքներ, բեկոր-բեկոր տարտղնուեցան անոր որդիները: Ողջունելիօրէն դէպի հայրենիք չուեց անոր հայրութեան ուշադրաւ գանգուածը եւ որուն մէջ էր ընկեր Արտօն: Նոր երդիք ունեցաւ Երեւանի մօտ՝ Առինջի մէջ: Նոր էջ բացաւ իր կեանքին մէջ՝ առանց խզելու իր պորտակալը կուսակցական կեանքէն թէ Հալէպէն:

Ամէն Հայաստան աչքելութեանս մի քանի անգամ կը տեսակցէինք բաժակ մը սուրճի շուրջ: Տարէցտարի ակնբախ էր անոր առողջութեան նահանջը: Իր նիւթերը նոյնն էին՝ Կիլիկեան Կրթարանը նախեալ առաջ. պէտք է օժանդակել անյապաղ կերպով, կանգուն պահել դպրոցը. մեր դարբնոցն է Կիլիկեանը: Իր էութիւնն էր հայկաբանութեան գոյակուրդ՝ ազգային եւ գաղափարական իմաստներով:

Երեւի վիշտը խորացաւ հետզհետէ: Բաժանումները, կարօտը, անցելայուշ քաղցը դրուագները կրծեցին հոգին անոր: Թէեւ միշտ կապի մէջ էր գաւազաններուն եւ թոռներուն հետ, կը զգար անոնց որդիական ջերմութիւնը, սակայն կարօտը գորշ կապարի նման կը ճնշէր անոր վրայ: Եւ... անժամանակ հեռացաւ մեզմէ ընկեր Արտօն: Բոլորէն սիրուած ու յարգուած ընկեր Արտօն: Անշահախնդիր, անձնդիր, նուիրեալ ընկեր Արտօն:

Իր դիմագծութեան մաս կը կազմէին համեստութիւնը, լուռ աշխատանքը, ընկերասիրութիւնը, անկեղծութիւնը եւ սկզբունքներէ չէղելու հետեւողականութիւնը:

Քառասուն օրեր մեզի կը բաժնեն այդ մռայլ պահէն՝ երբ առ յաւէտ հեռացար բոլորէն ընկեր Արտօն: Կեանքը իմաստաւորեցիր հայրենիքի ու գաղափարի նուիրումով եւ եղար ու պիտի մնաս օրինակելի ընկեր Հնչակեան Կուսակցութեան մեծ ընտանիքի անդամներուն յուշերուն մէջ:

Վարձքը կատար: Հողը թէթեւ գայ վրադ, պատնէջի ընկեր: Ա. Ռ.

Աւաղ Փակուում է Մշակոյթի Մի Օճախ Եւ...

Շարունակուած էջ 8-էն

միշտ հրաժեշտ է տալու մեզ, եւ մենք ամէնքս այդ հարցում ունենք մեղքի մեր բաժինը:

Մտաւորականի տիպիկ օրինակ է գրատունը տարիներ առաջ հիմնած, Ժամանակի ընթացքում հարստացրած, խանութը պահպանելու համար ամէն ջանք գործադրած տնօրէնը՝ պարոն Պերճ Տէր Սահակեանը: Ո՞վ չի հասկանում, որ գրատունը օգուտով չի ախատել: Բայց արի ու տես, որ պարոն Պերճը երբեք չի տրտնջացել, նա գոհացել է, երբ կարողացել է հոգալ գոնէ խանութը կենդանի պահելու ծախսերը:

Գրքերի նկատմամբ սէրը նրա մօտ առաջացել է դեռ Պէյրութում ապրելու տարիներին, երբ հայրը՝ Աւետիս Տէր Սահակեանը, նոյնպիսի տպարան եւ հրատարակչատուն ունէր, եւ տղան օգնում էր նրան՝ իրեն յանձնարարուած տարբեր գործեր կատարելով: Յընթացս սովորում էր հայկական միջնակարգ դպրոցում, որն աւարտելուց չետոյ կրթութիւնը շարունակեց նոյն այդ դպրոցին կից վեցամսեայ հայագիտական դասընթացներում: Այստեղ էր, որ առաջին անգամ աւելի մօտիկից ծանոթացաւ հայ մեծ գրողների կեանքին եւ գործունէութեանը եւ ընդմիջտ կապուեց դրանց հետ: Երբեւէ չմտածեց գրատան փոխարէն մթերային, տուղբանջարեղէնի կամ հագուստ խանութ հիմելու եւ աւելի մեծ շահ ունենալու մասին: Նա ծնեալ մտաւորաբան էր, մանկուց գիրք է տեսել, կարդացել ու սիրել, ընտելացել էր նոյնսիկ դրանց հոգին, ապրել դրանց մէջ եւ դրանց համար:

Տարիները գլորուել էին, արծաթով ծածկել Պերճ Տէր Սահակեանի մզերը, բացյ հոգին փոխել չէին կարողացել: Նա իր անբասիր գործունէութեամբ դարձաւ Կիլիկեան լիակամ համայնքի իւրօրնիանկ խորհանոցներից մէկը եւ շուրջը համաբարձեց տեղի ընդհանուր մտաւորականներին:


Օրեր առաջ, ինչպէս սովորաբար, մտայ պարոն Պերճ գրատունը: Սովորական բարեւոյց, ինչպէս էք, ինչպէս չէքից չետոյ յանկարծ իմացայ խան ումը փառելու մասին ցնցող նորութիւնը: Անպատելի հարուածից շուարեցի: Մի պահ ինձ թուաց, թէ եկել եմ մասնագիտելու իմ շատ սիրելի հարազատի տեսակցութեան տխուր արարողութեանը: Թուաց՝ սիրտս դադարեց բաբախելուց: Մի՞թէ այլեւս չէի մտնելու այդ նուիրական վայրը, որն ինձ համար հերանց տուն էր ասել, հայրենիքից պոկուած մի բեկոր:

Ինչեւէ: Փաստն այն է, որ աւաղ, փակուում է մշակոյթի մի օճախ եւս, որն աւելի քան 32 տարի ծառայել է հայապահպանման սրբազան գործին, եւ մօտ օրերես ընդմիջտ հրաժեշտ ենք տալու նրան: Ե՛ի քանի որ սա դառը իրողութիւն է, մեզ մնում է հաշտուել եղածի հետ, իսկ պարոն Պերճին մաղթել առաջընթացի տոկուն մոլորակեան կեանքի դաժան պայտարում:

Ռուբինա Նազարեան
Հայաստանի Հանրապետութեան
վաստակաւոր մանկավարժ
Մովսէս Խորենացու անուան
մետալակիր
ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան ոսկէ մետալակիր


VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



- Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝
- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը վաճառէք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԻ ԱՉԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahian
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՎԱՃԱՌՈՒՄ Է

գերեզմանի հողատարածք
Forest Lawn կարմիր եկեղեցու բակում
Արժեքի համար կարող էք գանգել
Մաթթին 818-484-0000

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Ընկ. Յարութ Թառապեան-Ֆաքեանի Մահուան Քառասունօրին Առթիւ Կեանք մը՝ Անսակարկ Նուիրուածութիւն

Քառասուն օրեր առաջ, Յարութ Թառապեան-Ֆաքեանի ճակատագրի քմայքին գծած ուղիին իբրեւ արդիւնք՝ իր անակնկալ մահը մեզի իր հետ բերաւ սուգի եւ վշտի օրեր:

Կորսնցողինք հայութեամբ շնչող լաւ ընկեր մը, որուն մահուան ոչ ոք հաւատաց եւ այսօր իսկ իր հարազատներուն հետ կը զգանք սուգը, միաժամանակ ապրելով այդ մահուան վիշտին ծանրութիւնն ալ:

Հանգուցեալը ծնած էր 1949-ին, Թրիփոլի-Լիբանան եւ իր նախնական ուսումը ստացած՝ տեղույն «Նուպարեան» վարժարանէն ներս: 1963-ին ծնողքին հետ միատեղ կը հաստատուի Հայկա-Սուրիա եւ ուր հոն ալ իր ուսումը կը շարունակէ «Կրիկեան» վարժարանէն ներս:

Հաւատքի ու հաւատարմութեան արժանաւոր մեր ընկերը Հայկալի մէջ, տակաւին պատանի, կը հանդիսանայ հիմնադիրներէն մէկը «Տիրուհի» ուսանողական միութեան միաժամանակ իր սէրը կապելով հայ բեմին: Հոս է, որ իր խոր գիտակցութեամբ, յարատեւ եւ անսակարկ աշխատանքով կը յայտնուի իր անմիջական եւ միեւնոյն ատեն գաղութի ուշադրութեան կեդրոնէն ներս: Դպրոց, կազմակերպութիւն, թատրոն, հայ մշակույթ, ասոնք եղած էին իր կեանքի կիզակէտները:

1980-ին ան վերջնականապէս կը հաստատուի Քալիֆորնիոյ Փասադինա քաղաքը եւ ուր նոյն հաւատարմութեամբ, ոգեւորութեամբ եւ աշխուժութեամբ կը շարունակէ Հնչակեան ընտանիքէն ներս ազգային եւ ընկերային իր բոլոր պարտաւորութիւններն ու պարկասանութիւնները:

Նախ իբրեւ ցայտուն օրինակ՝ հանգուցեալ ընկերը առաջին իսկ օրէն մաս կը կազմէ Լա Վերն քաղաքի Ս. Յակոբ Հայց. Եկեղեցւոյ թաղական խորհուրդին:

Այսօր բոլորը կրնան վկայել թէ ինչպէ՞ս «Ծառայել» բառին իսկական առումով, ան ծառայեց եկեղեցիին անհուն գոհունակութեամբ եւ հայու մաքուր եւ հաստատ հաւատքով, միաժամանակ տարիներով իր ժամերը յատկացնելով շրջանի Հ.Բ.Լ.Մ.-ի (նախապէս «Արտաւազ» իսկ ներկայիս «Սաթամեան») թատերախումբին, ստանձնելով կարեւոր դերեր եւ այս ձեւով իր նպաստը բերելով խումբի վերելքին եւ յաջողութեան:

Միւս կողմէ սակայն, ան չմոռցաւ հիմնել մեր իսկ սկստական շարժման յատուկ երիտասարդական թատերախումբը: Մէկ խօսքով

ամբողջ իր կեանքի ընթացքին իբրեւ օրինակաւ եւ կարգապահ կուսակցական, ան հայ մշակույթ եւ հայ թատրոն ապրեցաւ եւ իր հետ ալ ապրեցուց զանոնք իր անկեղծ եւ պատրաստակամ սիրտով: Սակայն, իր բարի եւ ազնիւ այդ սիրտը Ս. Զատկուայ օրը դաւաճանեց իր ապրելու կամքին ու վերջ դրաւ իր կենսունակութեան, իր ետեւ ձգելով իր սիրելի կիներ՝ Անին եւ իր եղբայրներն ու քոյրերը, ընկերներն ու հարազատները ու նաեւ մեզ բոլորս, իր անուշ ու քաղցր յիշատակ մատուցներով:

Ահա խտացուած կենսագրութիւն մը մեր սիրելի ընկերը: Ու որքան ալ մեր կեանքի մէջ ներմուծած ըլլանք այս մեր ապրած երկրի ընկերային կենցաղի տուրքերը, մեր հաւատքն ու սէրը, մեր յարգանքն ու մօտեցումը կը տարբերին միւսներէն, որովհետեւ շնորհիւ ընկեր Յարութի նման կուսակցական ընկերը կեանքի օրինակին, մեր համոզումը կը փոխուի, կը լուսաւորուի եւ կը դառնայ արմատական եւ հաստատ:

Ան էր, որ մեր նորահաս սերունդի հոգիներուն մէջ, հայրենիքէն հեռու, հոս փոքր հայրենիքներ կերտեց, հայութեան աւիշ սերմանեց, համբերութեամբ ու հոգածութեամբ եւ այս ձեւով մնաց մեր գոյութեան ի խնդիր տարուած պայքարին առաջնահերթ դիրքերուն վրայ:

Մեծ էր իր գործով, բառին իսկական առումով ու բովանդակութեամբ. եւ համեմատ թէ՛ սրտով եւ թէ՛ հոգիով: Մէկ խօսքով, հանգուցեալը այն քիչերէն էր, որ իր գործով թէ՛ յարգանք եւ թէ՛ ալ ակնածանք պարտադրեց բոլորին: Կուսակցական, միութենական եւ վարչական կարողութիւններով գինուած, ան գործեց լուռ եւ տքնաջան, գոհաբեր ոգիով եւ մեծ խոնարհութեամբ:

Իր վրայ առած կամ բեռնոցած բոլոր պարտականութիւնները, իբրեւ սրբազան առաքելութիւն կը տանէր եւ սիրով եւ յարգանքով ու մանաւանդ գիտակցութեամբ:

Սխալներ չէր հանդուրժեր: Կարգապահ էր եւ աշխատասէր: Ընկրկումներ չէր ընդունիր: Նիւթականով չէր հետաքրքրուած: Ամէն առիթով իր ներկայութիւնը տեսանելի էր մեր կուսակցական եւ միութենական եւ կամ մշակութային կեանքի ծաղկման մէջ:

Հոգածու էր բոլորին ու ասոր շնորհիւ մտերմիկ ու գեղեցիկ մթնոլորտ ստեղծեց մեր շրջապատէն ներս: Ոգի ներշնչելով իր կուսակցական ընկերներն ու միութեանները իր կեանքի ընթացքին իբրեւ օրինակաւ եւ կարգապահ կուսակցական, ան հայ մշակույթ եւ հայ թատրոն ապրեցաւ եւ իր հետ ալ ապրեցուց զանոնք իր անկեղծ եւ պատրաստակամ սիրտով: Սակայն, իր բարի եւ ազնիւ այդ սիրտը Ս. Զատկուայ օրը դաւաճանեց իր ապրելու կամքին ու վերջ դրաւ իր կենսունակութեան, իր ետեւ ձգելով իր սիրելի կիներ՝ Անին եւ իր եղբայրներն ու քոյրերը, ընկերներն ու հարազատները ու նաեւ մեզ բոլորս, իր անուշ ու քաղցր յիշատակ մատուցներով:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



Յարութ Ֆաքեանի մահուան քառասունօրին առիթով յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Մայիս 26, 2019ին Փասադինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ 2215 East Colorado Blvd, Pasadena:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Անի Մարսէլեան-Ֆաքեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարալ Թառապեան եւ զաւակունք
- Եղբայրը՝ Տիրալ Սաչիկ Ֆաքեան
- Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Վահէ եւ Ազնիւ Մելքոնեան եւ զաւակունք (Հայկա)
- Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Աւօ եւ Մարալ Պիպէրեան եւ զաւակունք (Լիբանան)
- Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Փիեռ եւ Լենա Ղաֆարի եւ զաւակունք

Թենականները աշխատանքի մղեց իր օրինակով եւ իւրաքանչիւր նախաձեռնութիւն դէպի յաջողութիւն առաջնորդեց ու հասցուց:

Կենցաղային իւրաքանչիւրութիւն ունէր, շրջապատուի ընկերներով, միութենականներով ներշնչում տալով բոլորին անխտիր՝ մեծին թէ պզտիկին: Կը սիրէր կեանքը, իր անբուժելի լաւատեսութեամբ: Կը սիրէր նաեւ գրուցել իր բարեկամներուն, նոյնիսկ հակառակորդներուն հետ ազգային, կուսակցական եւ ընկերային հարցերու շուրջ, որոնցմով միշտ հետաքրքրուած էր: Կուսակցական գործունէութեան կողքին եւ զուգահեռ եղած էր հայ թատրոնի հաւատարմ գաւալ: Վկայ իր ապրած տարիներու վաստակը:

Յամառ աշխատանքի եւ միեւնոյն ատեն տառապանքի ամբողջ պատմութիւն մը եղաւ ընկեր Յարութի կեանքը: Իրաւ կեցուածքի մարդ էր: Անկեղծ գիտուոր մը, ամէն ուղիւն ազատեց յատուկ: Պատանի տարիքէն արդէն մտած էր Հնչակեան կուսակցութեան շարքերը, միշտ հաւատարիմ մնալով այս մեր կուսակցութեան սորբազան գաղափարին:

Մէկ խօսքով գիտակցական կեանք մը ապրեցաւ եւ իր հետ ալ ապրեցուց ամբողջ իր շրջապատը: Բազմակողմանի բարեմասնութիւններ ունենալով հանդերձ, պաշտօններու չձգտեցաւ ան: Մտաւայեց գաղափարախօսութեան իրբեւ նուիրեալ մարտիկ ու իբրեւ գաղափարական եւ կազմակերպական մարդ, մնաց յարգուած մեր բոլորին կողմէ անխտիր: Ապրեցաւ առանց շեփորահարումի, իր ծառայասէր պատեանին մէջ քաշուած:

Մնաց մարդասէր, միշտ մարդոց օգնելու պատրաստ, մարդոց ուրախութիւններն ու տխրութիւնները բաժնեկից դարձնելու նախաձեռնութեամբ: Գիտցաւ զանազան վատն ու լաւը եւ կարողացաւ անմիջական լուծումներ գտնել անակնկալօրէն ստեղծուած զանազան հարցերու, որովհետեւ ան օժտուած էր մարդկային հոգիները տիրելու եւ համոզելու անուրանալի տաղանդով: Իր, ինքզինքը անսակարկ բաշխելու անշահախնդիր օրինակներով ներշնչած էր բոլորին:

Մէկ խօսքով, իր առաքինութիւններն ու արժանիքները մէկ անձի մէջ խմբող ներդաշնակ անհատականութիւն:

Անկասկած՝ ընկեր Յարութ Ֆաքեան կը պատկանի ա՛յն օրհնեալ փաղանքին, որոնք հայութեան եւ մարդկութեան աւիշ կը ներմուծեն իրենց ապրած շրջանակէն ներս:

Այսօր գինք կը յիշեն բոլոր անոնք, որոնք իր մէջ փնտռած ու տեսած էին պարկեշտ մարդը, վահանահայր, հաւատարմ կուսակցականը, որոնք իբրեւ իր կեանքի խորհրդանիշ իր հետ պատցուցած էր:

Անոր համար ընկեր Յարութի անունը մեզի կը բերէ անմեղ թելադրանքն ու բաղձանքը, որ իր նմաններուն ազգին ծառայելու վաստակը բոլորիս համար դառնայ օրինակելի ներշնչում:

Արդ, Այի մը խունկ եւ ծունկ մը աղօթք, իր վաստակին եւ իր յիշատակին:

Հանգիստ իր ոսկորներուն:

Legacy Realty
Nick Karasarkisian
 Broker - CalBRE # 01022153
 2275 Huntington Dr., #117
 San Marino, CA 91108
 Phone: 213.706.9990
 e-mail: nickkarasarkisian@gmail.com
 www.legacyrealtyca.com

NATIONAL NOTARY ASSOCIATION
 NOTARY PUBLIC
 MEMBER
Garine Depoyan
 626-755-4773
 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
 ghdepoyan@gmail.com

ՄԱՐԶԱԿԱՆ

«Մանչեսթեր Սիթի»-ն իր Պատմութեան Առաջին 6-րդ Անգամ Դարձաւ Անգլիայի Գաւաթակիր



Անգլիայի Գաւաթի խաղարկութեան եզրափակչում «Մանչեսթեր Սիթի»-ն «Ուեսթհեմ» մարզադաշտում 6 անպատասխան զնդակ ուղարկեց «Ուոլթֆորդ»-ի դարպասը:

«Քաղաքացիներ»-ի կազմում հեթ-տրիկ ձեւակերպեց Ռահիմ Ստերլինգը: Մէկական անգամ աչքի ընկան Դաւիդ Սիլվան, Կեւին դէ Բրուլենն եւ Գաբրիել ժեզուսը:

Այսպիսով, «Ման. Սիթի»-ն իր պատմութեան մէջ 6-րդ անգամ դառնում է Անգլիայի գաւաթակիր:

Նշենք, որ ընթացիկ մրցաշրջանում Պեպ Գուարդիոլայի սաները դարձել էին նաեւ Անգլիայի ախոյեան եւ Անգլիայի Լիգայի գաւաթի յաղթող եւ Անգլիայի սուպերգաւաթակիր:

Առաջին Անգամ Եւրոպայի 5 Առաջատար Առաջնութիւնների Բոլոր Ախոյեանները Պաշտպանեցին Տիտղոսը

Պատմութեան մէջ առաջին անգամ Եւրոպայի հինգ առաջատար առաջնութիւնների բոլոր ախոյեանները նոյն մրցաշրջանում պաշտպանեցին ախոյեանական տիտղոսները:

Միւնխենի «Բաւարիան» 7-րդ անգամ անընդմէջ դարձաւ Գերմանիայի ախոյեան, Սպանիայում դարձեալ ախոյեանի կոչումը նուաճեց «Բարսելոնան», Իտալիայում՝ «Նապոլի», Ֆրանսիայում՝ ՊՍԺ-ն, Անգլիայում՝ «Մանչեսթեր Սիթի»:

«Բարսելոնա»-ի Որոշ Ֆուտպոլիստներ Դեմ են Գրիզմանի Տրանսֆերին

Մադրիդի «Ատլետիկո»-ի յարձակուող Անտուան Գրիզմանի տրանսֆերը «Բարսելոնա» կարող է չկատարուիլ: Այս մասին տեղեկացնում է Diario Sport-ը:



Աղբիւրի փոխանցմամբ՝ կատալոնական ակումբի մի շարք ֆուտպոլիստների դուր չի եկել թիմի ղեկավարութեան տրանսֆերային քաղաքականութիւնը: Նրանք արդէն յայտնել են ղեկավարութեանը, որ դէմ են ֆրանսացու տեղափոխութեանը: «Կապտանուհազույններ»-ի առաջատարները համոզուած են, որ ակումբը չունի Գրիզմանի նման ֆուտպոլիստի ծառայութիւնների կարիքը:

Աւելի վաղ հաղորդուած էր, որ 28-ամեայ ֆուտպոլիստը մադրիդեան ակումբից հեռանում է յանուն «Բարսելոնա»-ի:

Ռամոսը Զի Ցանկանում, որ «Ռեալ»-ը Գնի Պոզբայի Տրանսֆերը

«Ռեալ»-ի աւագ Սերխիո Ռամոսը խնդրել է ակումբի նախագահ Ֆլորենտինո Պերեսին չզննել «Մանչեսթեր Եունայթեդ»-ի կիսապաշտպան Պոլ Պոզբայի տրանսֆերը:

Աղբիւրի փոխանցմամբ՝ սպանացի ֆուտպոլիստը կարծում է, որ Պոզբան կը փճացնի «սերուզբայիներ»-ի թիմում տիրող ընկերական միջավայրը եւ վատ կ'անդրադառնայ բոլորի վրայ: Նա նաեւ յաւելել է, որ ֆրանսացին իրեն պահելու է Գարետ Բեյլի նման:

Յիշենք, որ «արքայական ակումբ»-ը մտադիր է թիմ հրաւիրել Պոզբային, սակայն նրա տրանսֆերի համար չի ցանկանում 150 միլիոն եւրոյից աւելին վճարել:

Մուրիցիո. Որոշել եմ Ամրանը Վերադառնալ Մարզչական Աշխատանքին

«Մանչեսթեր Եունայթեդ»-ի նախկին գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրիցիոն խօսել է իր ծրագրերի մասին:

«Ես մի շարք լաւ յատկանիշներ ունեմ եւ դրանցից մէկն այլ ակումբներին եւ նրանց ղեկավարութեանը յարգելն է: Երբ Դեկտեմբերին հեռացայ «Մանչեսթեր Եունայթեդ»-ից, միանգամից որոշում կայացրեցի, որ ամրանն եմ վերադառնալու մարզչական աշխատանքին: Յուսով եմ՝ Յուլիանոսը հետաքրքիր առաջարկ կ'ունենամ որեւէ թիմի ակումբից», - պորտուգալացի մասնագէտի խօսքերն է մէջբերում Goal-ը:

Տիգրան Կիրակոսեանը՝ Սամբոյի Եւրոպայի Ախոյեան

Տիգրան Կիրակոսեանը հռչակուել է սամբոյի 2019 թուականի Եւրոպայի ախոյեան:



Սպանիայի Խիխոն քաղաքում մեկնարկած Եւրոպայի առաջնութեան մարզական սամբոյի մրցաշարի 52 կգ քաշային կարգի եզրափակչում Կիրակոսեանը 2:1 հաշուով յաղթել է ռուս Եւգենի Երիոմինին:

Մրցումային առաջին օրը պայքարի մէջ մտած Հայաստանի 7 ներկայացուցիչներից յաջողութեան են հասել նաեւ 68 կգ քաշային Ռաֆիկ Մանուկեանը (մարզական սամբո) եւ 57 կգ քաշային Պօղոս Բադալեանը (մարտական սամբո), որոնք դարձել են պրոնոզէ մետալակիր:

Սամբոյի Հայաստանի հաւաքականը Եւրոպայի առաջնութեանը մեկնել է 19 մարզիկով:

Լեւոն Արոնեանը Դուրս Մնաց Մոսկուայի «Գրան Պրիից»

Հայաստանի շախմատիստ Լեւոն Արոնեանին չյաջողուեց յաղթահարել Մոսկուայում ընթացող ՖԻԴԵ-ի «Գրան պրիի» մրցաշարի 1/8 եզրափակիչ փուլի արգելքը եւ աւարտեց ելույթները:

Ռուսաստանցի Եան Նեպոմնյաչչու հետ կայացած պատասխան երկրորդ պարտիայում մեր հայրենակիցը խաղաց սպիտակներով: Պայքարը շարունակելու համար Լեւոն Արոնեանին անպայման յաղթանակ էր պէտք, քանի որ նախօրէին նա պարտութիւն էր կրել առաջին խաղում: Աւագ, մեր շախմատիստը կրկին անվստահ անցկացրեց պարտիայի սկիզբը եւ ռուսաստանցի գրոսմայստերը դիրքային առաւելութիւն ստացաւ: Սեւերը, սակայն, չդիմեցին ռիսկի, փոխանակեցին գլխաւոր ֆիգուրները եւ արդէն 36-րդ քայլին լիովին հաւասարեցրին դիրքը: Լեւոն Արոնեանը ստիպուած հաշտուեց իր կնքից:

Այդպիսով, Եան Նեպոմնյաչչին 1,5:0,5 հաշուով յաղթեց միկրոմրցամարտը եւ մտաւ քառորդ եզրափակիչ, որտեղ նա կը հանդիպի չինացի գրոսմայստեր Յի Վեի հետ: Նշենք, որ մրցաշարի ֆաւորիտներից պայքարից դուրս են մնացել եւս երկուսը՝ հոլանտացի Անիշ Գիրին ու ասորպէջճանցի Շահրիյար Մամեդիարովը:

Արթուր Ալեքսանեանը Վերադառնում է Մրցագորգ

Յունահռոմէական ըմբշամարտի Հայաստանի հաւաքականը կը մասնակցեն Բոլաթ Թուրքմանովի անուն գաւաթի խաղարկութեանը, որը կ'անցկացուի Մայիսի 25-26-ը Ղազարաստանի Ալմաթի քաղաքում, փոխանցում է Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի կայքը:



Մայիսի 23-ին յունահռոմէական ըմբշամարտի Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Լեւոն Զուլֆալայեանի ղեկավարութեամբ մրցավայր կը մեկնեն Գէորգ Ղարիբեանը, Արմէն Մելիքեանը (60 կգ), Արթուր Շահինեանը, Մաքսիմ Մանուկեանը (87 կգ) եւ Արթուր Ալեքսանեանը (97 կգ):

Ալմաթի կը մեկնեն նաեւ մարզիչ էդուարդ Սահակեանը եւ մրցավար Գէորգ Ալեքսանեանը:

Յիշենք, որ Օլիմպիական խաղերի, աշխարհի ու Եւրոպայի ախոյեան Արթուր Ալեքսանեանը ըմբշամարտի մրցագորգից բացակայում է 2018-ի Նոյեմբերին Հունգարիայի մայրաքաղաք Բուդապէշտում անցկացուած աշխարհի առաջնութիւնից յետոյ: Վերջին շրջանում դիւմրեցի ըմբշը վերականգնուած էր վնասուածքից:

Ռաֆայել Նադալի Առաջին Մեծ Յաղթանակը Մրցաշրջան-2019-ում

Աշխարհի երկրորդ ուսկետ, սպանացի թենիսիստ Ռաֆայել Նադալը, իր առաջին տիտղոսը նուաճեց ընթացիկ մրցաշրջանում:



Հոնոմում կայացած ATP-1000 Internazionali BN d'Italia մրցաշարի եզրափակչում նա երեք սեթում յաղթեց համաշխարհային դասակարգման առաջատար, սերբ Նովակ Զոկովիչին՝ 6:0, 4:6, 6:1: Ի դէպ, սա առաջին մրցախաղն է, որում թենիսիստներից մէկը չոր հաշուով յաղթանակ է տօնել մէկ խաղափուլում:

Այս մրցախաղն աշխարհահռչակ երկու թենիսիստների թուով 54-րդ հանդիպումն էր: Զոկովիչն առաջմ առջեւում է 28:26 հաշուով: Այս տարի նրանք հանդիպել էին նաեւ Աւստրալիայի բաց առաջնութեան եզրափակչում, որտեղ յաղթանակ էր տարել սերբ թենիսիստը: